

Մկրտիչ Արմեն

Հունիսի քաներեքը

Գլուխ առաջին

1

Երևանից Էջմիածին տանող ասֆալտե ճանապարհով սլանում էր երթևեկության հերթական ավտոբուսը: Բաց մեքենայի սատելատեղեղում մարդիկ սատել էին ինչպես թատրոնի դահլիճում և ուշադիր ու սպասողական նայում էին առաջ: Շուրջը նրանք համարյա չէին նայում, որովհետև հետաքրքիր ոչինչ չկար: Լայն ճանապարհի երկու կողմերում, միապաղաղ և անընդմեջ, ձգվում էին այգիների գորշ, հողե պարիսպները: Բարձր ծառերի շարքերը ներսից զուգակցում էին դրանց՝ պարիսպների այս կողմում ստվերելով ճանապարհը, իսկ այն կողմում՝ համարյա փակելով այգիների տեսարանը:

Մարդիկ ավտոբուսում, լինելով գետնից համեմատաբար բարձր, պարիսպների վրայով և ծառերի արանքով կարող էին տեսնել այգիների տեսարանի պատառները, բայց ամեն տեղ նույնն էր՝ մրգի ծառեր, խաղողի թփեր, երբեմն նաև՝ միհարկանի կամ երկհարկանի մի տնակ՝ հեռու խորքում: Այդպիսի մի տնակ երբեմն նաև հանդիպում էր ճանապարհի վրա: Բայց տնակները նույնպես թվում էին անբնակ և նույնպես անհետաքրքիր:

Մի քանի տեղում միայն, որտեղ ձախակողմյան անընդմեջ պարիսպը կտրելով, դեպի այգիների խորքն էին գնում նույնպիսի պարիսպների արանքում սեղմված նեղ ճանապարհներ, մարդիկ նայում էին որոշ հետաքրքրությամբ՝ ո՛ր է տանում այդ ճանապարհը...

Հատկապես մի երիտասարդ՝ զինվորական հագուստով, բայց առանց ուսադիրների, անկասկած զորացրված, որ սատել էր՝ իր փոքրիկ ճամպուկը ծնկներին և շարունակ զգուշանալով՝ չնեղել իր հարևաններին, կլանված նայում էր հանդիպող յուրաքանչյուր այդպիսի ճանապարհի: Երբ ավտոբուսը բավական մոտեցավ ևս մի այդպիսին, զինվորականը մարդկանց գլխների վրայով ձայն տվեց շոֆերին.

— Կանգնեցրեք ավտոբուսը, խնդրում եմ...

Շոֆերը նախ ետ նայեց՝ տեսնելու համար, թե ով էր դիմում իրեն այդպիսի անսովոր խնդրով, և ի հարգանք Հայրենական պատերազմի մասնակցի, որի կուրծքը, առավել ևս, զարդարված էր մի քանի շքանշաններով ու մեդալներով, կանգնեցրեց ավտոբուսը, թեև այդտեղ ոչ մի կանգառ չէր սահմանված: Չինվորականն իսկույն ճարակորեն դուրս ցատկեց ավտոբուսից և ձեռքերը բարձրացնելով, ընդունեց իր ճամպուկը, որ մեկնեց նրան ուղևորներից մեկը: Չինվորականը մտավ նեղ ու ոլործուն ճանապարհը, իսկ ավտոբուսը սլացավ:

2

Ճամպուկը մի ձեռքին, իսկ մյուս ձեռքով իր շքանշաններն ու մեդալները փոշուց մաքրելով կամ գուցե սրտի ուժգին թակոցը զսպել փորձելով, երիտասարդ զինվորականը քայլում էր նեղ պատերի արանքով: Ճանապարհը բավական տեղ գնում էր ամբողջովին արևի տակ, ապա շարունակությունը գտնվում էր անարև ստվերի, համարյա մթության մեջ: Պարիսպների ետևից ծառերն իրենց խիտ սաղարթները միախլուսել էին իրար և ճանապարհը վերածել ծածկված միջանցքի:

Երիտասարդի ոտքի տակ չիսկիսկաց իր տեղում պինդ չնստած մի սալաքար: Սալաքարերով ծածկված, ճանապարհը կտրելով, մի այգուց մյուսն էր անցնում փոքրիկ առվակը:

Այդ ամենը՝ ամեն մի քարը, ամեն մի թիզ հողը ծանոթ էր նրան և հարազատ: Իսկ մի քանի քայլից հետո լինելու էր նաև դուռը...

Երիտասարդը կանգ առավ, այս անգամ արդեն, ակնհայտորեն, հուզմունքը մեղմելու համար, բայց, ըստ երևույթին, ոչ մի արոյունքի չհասնելով, շարունակեց քայլել:

Դիմացը ճանապարհը վերջանում էր պարսպով: Աջ թևի վրա, ամենածայրում, երևում էր այգու մուգ կարմիր, երկփեղկանի, ցածրիկ դուռը՝ երկաթե թակով: Երիտասարդը մոտեցավ՝ հուզմունքից զույնը թռած, անկարող՝ ուրախ լինել և միայն տազնապած, բռնեց թակը, բարձրացրեց, մի պահ կարծես տատանվեց՝ թակե՞լ, թե մի քիչ էլ հետաձգել, ապա ինքն էլ չիմացավ, թե ինչպես ձեռքն իջավ և իրար ետևից նրա ականջին հասան անցյալում նրան այնքան ծանոթ և հիմա էլ, չորս տարվա ընդմիջումից հետո, զարմանալի նույնությամբ վերարտադրվող թակոցի երեք հստակ, ընդհատ հնչյունները:

— Գարեգինը... — լսվեց ներսից, դռնից ոչ հեռու, մոր ճիչը:

— Ճանաչեց... — մտածեց երիտասարդը զարմանքով և խանդաղատանքով, — ինչ է նշանակում մայր...

Դուռը բացվեց և մայրը, դեռ սև մազերով և ոչ այնքան ծերացած, տարածեց թևերը և բացականչեց.

— Բայ՛ւր...

Գարեգինը նետվեց մոր գիրկը, համբուրեց նրան և իր գլուխը դրեց նրա ուսին: Մայրը՝ սիրո և կարոտի ուժգնությունից նույնպես ուրախանալու անկարող, հագիվ կրկնեց.

— Բայ՛ւր... Բայ՛ւր...

Մոր ուսի վրայով Գարեգինը գաղտագողի նայեց ներս: Ոչ, այլևս ոչ ոք դուրս չէր գալիս բակից: Ուզեց հարցնել, բայց ամաչեց. դա շատ հապճեպ կլիներ և գուցե վշտացներ մորը: Շարունակեց գրկախառնությունն ու զգվանքը, և երբ նրան թվաց, որ այժմ, վերջապես, պատշաճ է, հարցրեց.

— Իսկ որտե՞ղ է Սիրանուշը, մայրիկ...

— Սիրանու՞շը: Մտիր, բայ՛ւր, վերցրու չեմոդանը: Սիրանուշը քաղաք է գնացել, կգա:

Հիասթափության և ափսոսանքի վիշտը սեղմեց Գարեգինի կոկորդը: Որ Սիրանուշը քաղաք էր գնացել, դրա մեջ արտասովոր ոչինչ չկար: Բայց չորս տարի շարունակ Գարեգինն իր վերադարձի այդ վայրկյանը երազել և պատկերացրել էր անպայման երկուսի հետ՝ Սիրանուշի և մոր: Այդ իսկ պատճառով նա իր վերադարձը հետաձգել էր մի օրով, հարմարեցրել էր կիրակի օրվան, որպեսզի Սիրանուշը, որն աշխատում էր քաղաքում, լիներ տանը:

Նա վերցրեց ճամպրուկը, ձգվեց առաջ, և միայն վերջին պահին, աչքերի անմիջապես դիմաց տեսնելով մուգ կարմիր շեմափայտը, արագ կռացավ՝ ճակատը դռանը չխփելու համար:

Ներսում, ձախ թևի վրա, ուղղակի դռան մոտ, երկհարկանի բնակարանի արևոտ ճակատն էր, իսկ մնացյալ բոլոր կողմերում՝ այգին: Աջ թևի վրա, բնակարանի դիմաց, ստվերախիտ ծառախմբի տակ զնգաց շան շղթան և սպիտակ ու սև բրդոտ գամփռը, ուրախությունից վնաստալով, իր կարծ շղթան ձգած և ետին ոտների վրա բարձրացած, ցատկոտելով սկսեց ճիգեր անել՝ մոտենալու հին բարեկամին:

— Բողար,— ժպիտով բացականչեց Գարեգինը և վազելով դեպի նա, կռացավ: Շնչասպառ հեալով, գամփռն սկսեց լիզել նրա ձեռքերը, հագուստը և նորից վնաստալ:

— Չես մոռացել ինձ, Բողար,— ասաց Գարեգինը և քաջալերաբար խփելով գամփռի մեջքին, վեր կացավ:

Բնակարանի պատի տակ պատին էր հենվել հին, ծանոթ բահը: Առաջին հարկը, երկու փոքրիկ լուսամուտներով և դռնով, փակ էր: Գարեգինի ծնողներն այդտեղ ապրել էին շատ վաղուց, հեղափոխությունից առաջ: Իսկ հետո, երբ վտարել էին երկրորդ հարկում ապրող հարուստ այգետիրոջը և այգին անցել էր սովխոզին, Գարեգինի հայրն իր կնոջ հետ բարձրացել էր երկրորդ

հարկ՝ մինչև մահ շարունակելով աշխատել իբրև այգու պահապան, իսկ առաջին հարկը դարձրել էին պահեստ: Գարեգինը ծնվել էր երկրորդ հարկում և նրա բոլոր հիշողությունները կապված էին դրա հետ:

Նա նայեց վերև: Գորշ, հողե պատի վրա սպիտակին էր տալիս երեքփեղկանի լուսամուտը, ապա տախտակե ծածկված պատշգամբը՝ ապակեպատ սպիտակ դռնով, ապա երեքփեղկանի մյուս լուսամուտը: Մուտքի դուռը՝ ներքին սանդուղքով, գտնվում էր կողքի պատի վրա:

Գարեգինին թվաց, թե ուր որ է, բաց լուսամուտից դուրս պիտի նայի կամ դուռը շրխկացնելով, պատշգամբ պիտի դուրս գա Սիրանուշը, կամ գուցե հայտնվելով այգու խորքից, պիտի նետվի նրա գիրկը... Ի՞նչ վատ է, որ նա քաղաք է գնացել...

Իսկ մայրը, զույգ թևերով նրա մեջքը գրկած, քայլում էր նրա կողքով, տալիս էր բազմաթիվ հարցեր, կցկտուր հաղորդում էր նորություններ և այլևս ոչ մի խոսք չէր ասում Սիրանուշի մասին: Մի՞թե, իրոք, նա չի պատկերացնում, թե որքան է կարոտել Գարեգինը նրան: Բայց ոչ, ոչ, դա կարոտել չէ, դա ուրիշ բան է, դա անուն չունի, անհնար է արտահայտել: Դա նրան տեսնելու անզուսպ, անդիմադրելի, անհաղթահարելի բաղձանք է, նման քնի, երբ օրեր և գիշերներ օղակման մեջ անքուն մնալուց հետո նա քայլում էր լուռ, և գիտեր, որ միակ փրկությունը քայլելու, հեռանալու մեջ է, իսկ քունը, ոտից գլուխ նրա մեջ լցված, ձգում էր՝ ընկնել տեղն ու տեղը և քնել...

Սանդուղքով բարձրանալիս Գարեգինը չհամբերեց և հարցրեց մորը.

— Իսկ ինչո՞ւ է գնացել: Շո՞ւտ կգա...

— Կգա, կգա:

Սանդղագլխից դուռն ուղղակի բացվում էր մեծ սենյակի վրա, որին պատկանում էին մի լուսամուտն ու պատշգամբը: Երբ Գարեգինը մտավ ներս, ամեն ինչ իր նախկին տեղումն էր, առանց փոփոխության: Իր գինվորական սապոզներով և համազգեստով՝ նա ինքն էր միայն փոխվածը: Կարծես չվստահելով առաջ գնալ, նա կանգնեց դռան մոտ:

Իրենց բնակարանն էր: Մեղմ էր սենյակի ստվերոտ զովությունը, քնքուշ էին լուսամուտի և դռան ժանյակավոր վարագույրները, որ թեթևակի օրորվում էին հովից, սիրելի էր մոր մահճակալն անկյունում՝ սպիտակ անկողնով, պարզունակ էր պահարանը՝ մյուս անկյունում, հաճոյատես էր գորգով ծածկված թախտը՝ լուսամուտի և պատշգամբի դռան միջև, մտերիմ էր սպիտակ ու վարդագույն սփռոցով սեղանը՝ դրա առջևում:

Առաջին անգամ նա զգաց լիովին, որ պատերազմը վերջացել է և չորս տարվա մեծ ընդմիջումով կիսատ մնացած կյանքը շարունակվում է: Եվ որովհետև ամեն ինչ այնպես էր, ինչպես պատերազմի սկսված և իր հեռացած օրը, նույնիսկ մայրը չէր փոխվել, ուստի ստեղծվում էր լրիվ պատրանք, թե ոչինչ չի անցել-դարձել և կյանքը շարունակվում է ընդհատված կետից՝ ինչպես հեքիաթի քարացած քաղաքում: Թվում էր, թե եղել է միայն մի ծանր օր՝ հունիսի քսաներկուսը, իսկ այսօր հաջորդ օրն է՝ հունիսի քսաներեքը...

— Սոված ես, բալա, նստիր,— ասաց մայրը:

— Ոչ, մայրիկ, ոչ, ոչ,— շնչաց Գարեգինը,— թող Սիրանուշը գա՝ հետո կճաշենք:— Ապա ճամպրուկը թողնելով դռան մոտ և գլխարկը նետելով սեղանի վրա, կամացուկ առաջացավ դեպի դիմացի պատը, դեպի իր և Սիրանուշի սենյակի դուռը: Մայրը, նույնպես լուռ, հետևեց նրան:

Գարեգինը բաց արեց դուռը, մտավ: Նույնը: Նախկինը: Մի պատի տակ՝ իր մահճակալը, իսկ մահճակալի գլխավերևում, լաքած դեղին շրջանակի մեջ՝ իր լուսանկարը: Մյուս պատի տակ՝ Սիրանուշի մահճակալը, իսկ մահճակալի գլխավերևում, նույնպիսի մի շրջանակի մեջ...

— Այս ի՞նչ է,— ճչաց Գարեգինը և նետվեց դեպի այնտեղ:

— Վա՛յ,— խեղդված ձայնով և ինքն իրեն մրմնջաց մայրը՝ նոր միայն հիշելով մոռացածը, և նույնպես, բնագդաբար մոտ վազեց, բայց արդեն ուշ էր և թաքցնելն անհնար:

Սիրանուշի լուսանկարի տակ ամրացված էր մահվան սև ժապավենը...

3

— Մեռել է, մեռել է,— սրտապատառ բացականչեց Գարեգինը և ծունկի ընկնելով մահճակալի մոտ, երեսը դրեց անկողնի վրա և սկսեց դառը հեկեկալ: Նրա ուսերն ու մեջքն ուժգին ցնցվում էին ջղազար, նա արագ-արագ շուռ էր տալիս գլուխն աջ ու ձախ: Կարծես դագաղի վրա ընկած, նա իր այտերն էր քսում մեռած կնոջ, միակի, անփոխարինելի դեմքին:

Եվ հանկարծ, դառնացած, վիրավորված, որ մայրը թաքցրել էր նրանից նրա դժբախտությունը, բարձրացրեց արցունքից թրջված ու կարմրած դեմքը և շուռ գալով դեպի մայրը, հարցրեց հանդիմանությամբ.

— Շո՞ւտ է գալու Սիրանուշը քաղաքից...

Ապա նորից ընկնելով ընդմիշտ բացակա կնոջ դատարկ անկողնի վրա, շարունակեց իր անմխիթար լացը:

— Լաց, բալա, լաց,— ասաց մայրը, որ նույնպես լուռ արտասվում էր:

Որևէ մխիթարական խոսքի բացարձակ անհնարինությունը և այն որ մայրը նրան լիակատար իրավունք էր տալիս լալու, դաժան հստակությամբ զգացնել տվեցին Գարեգինին պատահածի անդառնալիությունը: Արցունքների և հեկեկոցի մի նոր, ավելի ուժեղ հորձանք ցնցեց նրան ոտից գլուխ, նրա ողբը դարձավ բարձրաձայն ու անզուսպ:

Իսկ մայրը, գոհ իր խոսքերի արդյունքից, գոհ, որ որդին դատարկվում է վշտից և ոչ թե վտանգավորաբար կուտակում այն իր մեջ, նորից կրկնեց.

— Լաց, բալա, լաց՝ ինչքան կարող ես...

Եվ չխանգարելու համար տղային, նա ետ-ետ գնաց և ոտների ծայրերի վրա դուրս ելավ սենյակից:

Նայելով վերև, նկարին, Գարեգինն իջեցրեց այն, դրեց անկողնի վրա և դեմքը հպեց սառը ապակուն:

— Ինչո՞ւ մեռար, ինչո՞ւ մեռար, ես ի՞նչ անեմ առանց քեզ...

Սառը ապակու քնքուշ ողորկությունը նման էր մեռածի այտի, նկարի շրթունքների մեղմ կիսաժպիտը նման էր հրաժեշտի: Ամեն ինչ ասում էր այն մասին, որ Սիրանուշը մեռել է, Սիրանուշը չկա...

Վեր ցատկելով տեղից, Գարեգինը կանգնեց, ձգվեց ողջ հասակով, կարծես սիրտը պատռվում էր օդի պակասությունից: Նա ձեռները տարածեց աջ ու ձախ՝ օգնություն խնդրողի նման, բայց ոչ ոք աշխարհում չէր կարող նրան օգնել:— Սիրանուշը մեռել էր, այդ անհնար էր փոխել...

Նա նստեց մահճակալի վրա, կծկվեց, գլուխը խոնարհեց ծնկների վրա և թևերը գրկելով, սկսեց օրորվել ու լուռ հծծալ. կարծես թևերն էին ցավում անտանելի ցավով:

— Սիրանուշ,— շշուշաց նա սիրած կնոջ անունը և անսպասելիությունից լարվեց: Այնքան ծանոթ էր նրան այդ շշուշոյն, այդ դիմումը՝ կնոջը, որին կինը միշտ պատասխանում էր որևէ փառաբանական բառով, որ նրան թվաց, թե հիմա էլ լսելու է նրա ձայնը:

— Սիրանուշ...— կրկնեց Գարեգինը և մի պահ սպասելուց հետո փղձկաց հուսահատ,— ո՛հ, ո՛հ, չկա, մեռել է, մեռել է...

4

Մայրը մի քանի անգամ դուռն անսկատելիորեն կիսաբաց արեց և նայեց ներս: Գարեգինը դեռ լալիս էր: Նրա կարոտը՝ անցկացրած հրի ու սրի միջով, ռազմաճակատներով, չորս երկար տարիների անթիվ վտանգներով, կարոտը՝ բորբոքված վերհուշներից, երազներից, զառանցանքի հասնող կարոտը՝ նորից լինել Սիրանուշի մոտ, այլևս հագուրդ չէր ստանալու երբեք... Չորս

տարվա կուտակված խոսքերը նա չէր ասելու ոչ ոքի... Ճակատամարտերի ծանր տանջանքների գանգատը նա այլևս չէր անելու ոչ ոքի և ոչ ոք իր կանացի փոքրիկ ձեռքով նրա գլուխը շոյելով, չէր ամոքելու նրան... Երբ նա հանի իր գինվորական համազգեստը և հագնի նախկին հագուստները, մինևույնն է, դրանով չի թոթափելու իր կյանքի վրայից չորս տարիների գոյությունը... Սիրանուշը, միակը, անփոխարինելին, որ եղել էր նրա ողջ կյանքում, մանկությունից մինչև ամուսնություն, և այնուհետև միշտ, այլևս չէր լինելու երբեք...

Դուռը նորից կիսաբաց եղավ, ներս նայեց մայրը: Մոր և որդու հայացքները հանդիպեցին: Մայրը մտավ ներս և լուռ նստեց:

— Ե՞րբ մեռավ,— հարցրեց Գարեգինը քիչ հետո՝ խաղաղ, բայց լաց լինելուց խզված ձայնով: Որ կինը կենդանի էր եղել դեռ մի տարի առաջ, նա այդ գիտեր նամակներից:

Տղայի արտաքուստ հանգստությունը սխալեցրեց մորը և նա ասաց ճշմարտությունը.

— Կլինի մի շաբաթ:

Գարեգինը բարձրացրեց ձեռքը և շփեց կզակը, կարծես ուզում էր հաշվել, թե որքա՞ն ժամանակ է անում մի շաբաթը:

Մայրը վախեցած ցնցեց տղայի ձեռքը.

— Լաց, բալա, լաց...

— Ոչ, ոչ, սպասիր... Սիրանուշը մեռել է...

Նա ձեռքերով փակեց աչքերը և երկար ժամանակ մնաց այդպես կանգնած: Եվ հանկարծ, նրան կասկածելի թվաց և այն, որ Սիրանուշը մեռել է մի շաբաթ առաջ, և այն, որ դուռը բաց անելիս և դրանից հետո միշտ, մայրը համեմատաբար զուսպ էր և հանգիստ, համենայն դեպս ոչ այնպես, ինչպես կարող էր լինել մի շաբաթ առաջ իր սիրասուն հարսին թաղած սկեսուրը, որը, մանավանդ, գիտեր, թե ինչպես էր սիրում նրա որդին այդ կնոջը...

Գարեգինը կամացուկ վար առավ ձեռքերն աչքերից:

— Ի՞նչ է պատահել, մայրիկ, ճիշտն ասա,— հարցրեց նա պահանջկոտ:

— Ի՞նչ պիտի պատահի մահվանից վատ...

— Մայրիկ,— ասաց Գարեգինը խստությամբ,— դու մի անգամ արդեն խաբեցիր ինձ: Եթե նորից խաբես...

Նա ընդհատեց իրեն՝ վատ խոսքեր չասելու համար, ապա հանկարծ հարցրեց.

— Գուցե չի՞ մեռել, հա՞, գուցե ամուսնացել է ուրիշի հե՞տ...

Նա բոլորովին մոռացավ սև ժապավենը, նրա աչքերում շողաց հույսը:

— Մայրիկ,— ուրախ բացականչեց Գարեգինը,— նա կենդանի է, այնպես չէ՞:

— Ոչ, բալա, ոչ:

— Երդվիր:

— Արևդ վկա, Գարիկ:

Հույսի ժպիտը մեռավ Գարեգինի դեմքի վրա:

— Եթե ողջ էլ լիներ՝ դու ինքդ պիտի հրաժարվեիր նրանից:

— Ի՞նչ է պատահել,— դողաց Գարեգինը,— ինչո՞ւ ես տանջում...

Թաքցնելն այլևս անհնար էր: Մայրն ասաց.

— Սպասեց քեզ երեքևկես տարի, իսկ մնացած կես տարին, ինչպես հետո պարզվեց... Վերջն էլ երբ որ տեսավ՝ թաքցնել չի լինի, սպանեց ինքն իրեն...

Գարեգինը ձեռքը տարավ դեպի մահճակալի գլուխը, բաց ակոճակ անզգայաբար տրորեց այն մի քանի անգամ, ապա առանց նայելու մորը, ասաց.

— Պատմիր...

5

— Ի՞նչ պատմեմ, բալա,— հառաչեց մայրը և արցունքները բուխ թափվեցին նրա աչքերից,— ես այն անգութին այնքան էի սիրում, որքան քեզ: Ինչպե՞ս չսիրեի, ախր նա էլ համարյա իմ երեխան էր: Դու երեք տարեկան չկայիր, որ հայրիկդ նրան գտավ ճանապարհի վրա, հինգ-վեց ամսական, բարուրի մեջ: Այնպես էլ չիմացանք, թե որ անգութ մայրն էր զցել: Իրար հետ մեծացաք, իրար հետ խաղացիք, իրար հետ դպրոց գնացիք, իրար հետ ամուսնացաք... Անգութ պատերազմը որ չլիներ, հիմա թոռներ կունենայի, կապրեինք ուրախ, զվարթ... Մագերիս համրանքի չափ անիծել եմ պատերազմ զգողներին: Քու գնալուց հետո բա այստեղ ի՞նչ քաշեց ժողովուրդը... Մենք դեռ ոչինչ, երկու հոգի էինք, երկուսս էլ աշխատող: Բայց ես իմ ապրելու մասին չէի մտածում, բալա, այլ թե ինչպես անեի, որ Սիրանուշին ողջ-ամողջ, անարատ, պահեի քեզ համար: Խեղճն ինքը գիշեր-ցերեկ քո մասին էր մտածում, քո կյանքի, քո առողջության...

Նա ընդհատեց, նայեց տղային, կարծես տատանվելով՝ շարունակե՛լ, թե ոչ, ապա շարունակեց.

— Քո գնալուց հետո նա էլի աշխատում էր իր տեղում: Բայց դե, մենակ աղջիկ, ինչպե՞ս կարող էր ամեն առավոտ-երեկո գնալ քաղաք, գալ: Առաջվա նման դու հո հետը չէի՞ր: Քանի անգամ բնակարան առաջարկեցին քաղաքում՝ մերժեց: Ես ասում էի՝ կամ միասին տեղափոխվենք, կամ գոնե մենակ ինքդ գնա, մեղք ես: Չհամաձայնվեց: Ծիծաղում էր, թե շատ որ ստիպես, քեզ կուղարկեմ, իսկ ինքս կմնամ քու փոխարեն, այգու պահապան: Ինքը չէր ասում պատճառը, թե ինչու չի ուզում տեղափոխվել, բայց ես հասկանում էի: Ախր այս այգու մեջ է անցել ձեր մանկությունը, ձեր սերը, ամեն ծառի ետևում պահմտոցիկ եք խաղացել, ամեն թփի մոտ իրար խաղող եք հյուրասիրել, խոտերի վրա գլորվել եք, կռվել, խռովել ու հաշտվել, այս սենյակի մեջ մարդ ու կին եք եղել... Այլևս չպնդեցի, որդիս: Առաջվա նման ավտոբուսով գնում, ավտոբուսով գալիս էր: Իսկ եթե ուշ էր լիսում, գիշերը մնում էր ընկերուհու մոտ՝ Վերգինեի: Նրա ամուսինն էլ բանակումն էր, անցյալ տարի սև գիրն ստացվեց...

— Ինձ հետ էր... — մռայլ հանգստությամբ ասաց Գարեգինը,— նա նռնակով սպանվեց... Ես գրել էի ձեզ: Ուրեմն չե՞ք ստացել:

— Մի օր հանդիպիր քաղաքում, պատմիր կնոջը,— տղայի հանգստությունից քաջալերված, ասաց մայրը:— Նրանից ոչ մի նամակ չկար, առաջին ու վերջին տեղեկությունը սև գիրն էր: Իսկ քեզանից, փառք աստծու, հենց երկրորդ տարին մի նամակ ստացանք: Ի՞նչ էր անում Սիրանուշն ուրախությունից, ախ, ի՞նչ էր անում... Իսկ երրորդ տարին ավելի լավ էր, համարյա ամեն ամիս նամակ էինք ստանում: Բայց դու մեր գրածները չէիր ստանում, որովհետև քեզ շուտ-շուտ տեղափոխում էին Գերմանիայի խորքերը: Իսկ հետո, վերջին տարին, նամակներդ բոլորովին կտրվեցին: Օր ու արև չունեինք, ամենավատ բանն էինք մտածում... Պատերազմը որ վերջացավ, մենք էլ հանկարծ հեռագիր ստացանք, թե գալիս ես... Սիրանուշը տանը չէր: Եկավ, ցույց տվեցի հենց այդտեղ էլ զարմացա: Գույնը զցեց, կարմրեց, ոչ ուրախություն, ոչ ժպիտ: «Ի՞նչ պատահեց»,— ասացի: Ասաց. «Հանկարծակի ցույց տվեցիր, սիրտս թունդ ելավ, մայրիկ»... Ես ինքս էլ հասկացա, որ վատ արեցի: Մի քանի օր հետո...

Նա լռեց: Գարեգինը նայեց նրան: Մայրը սրբում էր արցունքները:

Մի քանի օր հետո Սիրանուշը ասաց. «Մայրիկ, ես այս գիշեր տուն չեմ գա, երեկոյան գործ ունեմ հիմնարակում: Կընեն Վերգինեի մոտ»: «Ի՞նչ կա որ,— ասացի,— գնա»: Գնաց... Գնալուց առաջ ասաց ինձ. «Երբ Գարեգինը գա, իմ կողմից էլ համբուրիր նրան...»: Բայց մյուս երեկո նա չվերադարձավ: Սպասեցի էլի երկու օր, կարծես աշխարհը գլխիս սևացավ: «Զլինի՞ տրամվայի տակ է ընկել»,— մտածեցի: Այգու գիշերվա պահապանին խնդրեցի՝ հսկել ու ինքս գնացի քաղաք, Վերգինեի մոտ: «Սիրանուշն ինձ մոտ չի եղել»,— ասաց նա: «Ինչպե՞ս թե չի եղել...»: Մեկ էլ այն իմացա, որ խեղճ կինը վրաս ջուր է լցնում, քաշում է ինձ, որ հատակից բարձրացնի մահճակալին:

«Ինչպե՞ս թե չի եղել»,— ասացի ես: «Մայրիկ,— ասաց Վերգինեն,— դու պառկիր, իսկ ես գնամ միլիցիա՝ իմաց տամ...»:

Գարեգինը ձեռքը տարավ դեպի օձիքը, քանդեց: Նա խեղդվում էր: Այդ ամենը պատահել էր նրա՝ Սիրանուշի հետ...

— Մի քանի ժամ հետո,— շարունակեց մայրը,— Վերգինեն վերադարձավ լաց ու վայնասունով: «Սիրանուշը մեռել է, մայրիկ,— գոռաց նա՝ վզիս փաթաթվելով:— Միլիցիայում ոչինչ չգիտեին, բայց ես գնացի փոստ, ցպահանջ նամակ ստացա նրանից: Վերջ է տվել իր կյանքին...: Ես գիտեի, որ նա հղի էր՝ ահա վեց ամիս...»:

Գարեգինը ձեռքերը տարավ դեպի երեսը, ծածկեց, կարծես պաշտպանում էր հարվածից:

— Ինչպե՞ս թաղեցիր,— հարցրեց նա ձեռքերի միջից:

Դիակը դեռ չէն գտել, բայա: Հայտնել ենք միլիցիային: Փնտրում են: Բայց Վերգինեի պատմությունից հետո սիրոս միանգամից կտրվեց այդ անգութից: Էլ ոչ ուշաթափվել, ոչ լաց լինել: Թողեցի, եկա տուն: Նա որ քեզ ուրացավ, էլ ես ինչպե՞ս սիրեի նրան...

Նա նայեց տղային, համոզված, որ իր պատմությունից հետո նա ևս ատելությամբ պիտի լցված լինի դեպի դավաճան կինը: Սակայն Գարեգինը նստած էր լուռ, անշարժ, ձեռքերով երեսը ծածկած: Եվ նա չէր կարողանում հավատալ, թե մայրը չի չափազանցնում, թե նա իրոք, միանգամից և ընդմիջտ դադարել է Սիրանուշին սիրելուց:

— Իսկ սև ժապավե՞նը, մայրիկ,— հարցրեց նա՝ կարծես մորը սիրո զգացմունքի մեջ բռնելու համար:

— Ժապավենը, բայա, ինքն էր խփել գնալուց առաջ: Ես չէի նկատել, որովհետև շատ ուշ-ուշ էի մտնում ձեր սենյակը: Միայն երեկ առավոտ նկատեցի, բայց ձեռքս չգնաց, որ քանդեի...

— Նամակը...— պահանջեց Գարեգինը:

Մայրը տվեց նրան իր գրպանում պատրաստ պահած թղթի կտորը: Սիրանուշն այնտեղ հաղորդում էր Վերգինեին իր որոշման մասին, խնդրում էր զգուշությամբ հայտնել դա սկեսրոջը և վերջին բարևն էր հղում Գարեգինին...

— Լավ, գնա, մայրիկ,— խնդրեց տղան:— Թող ինձ մի քիչ մենակ...

6

Մնալով մենակ, Գարեգինը վերցրեց կնոջ լուսանկարը և նայեց լուռ ու երկար: Եվ նրան թվաց, թե ծանոթ, սիրելի հայացքն ասում էր նրան.

— Ես մեղավոր չեմ Գարիկ, եթե իմանաս...

— Ի՞նչը իմանամ,— բարձրաձայն աղերսանքով դիմեց Գարեգինը նկարին և սթափվեց իր ձայնից: Պատասխանողը չկար, նա մեռել էր:

— Ի՞նչը իմանամ, ջանիկ, ասա, ինչո՞ւ այդպես արեցիր,— մրմնջաց Գարեգինն առանց բառերի,— ասա՛, ասա՛... Դու ոչ ոքի չես ասել, ոչ նույնիսկ Վերգինեին: Մի՞թե ինձ էլ չես ասի: Ես եմ, Սիրանուշ, Գարիկը...

Նա լուսանկարը դրեց մահճակալների միջևի սեղանակի վրա, մոտ քաշեց աթոռը, նստեց և գլուխը ձեռներին կռթնելով, շարունակեց նայել՝ անթարթ, լուռ...

— Չի՛ կարող պատահել,— բացականչեց նա հանկարծ, և իսկույն զգաց, որ ավելորդ են այդ բառերը, հակաճառությունները, որ պատահածը պատահել է, և այդ՝ լոկ իր եռության բողոքն է դրա դեմ, իր գիտակցության հաշտվել չկարողանալը դրա հետ:

— Ի՞նչ է պատահել քեզ, իմ հոգու հատոր,— նորից դիմեց նա լուսանկարին,— ինչո՞ւ այդպես արեցիր...

Եվ հանկարծ նա պատկերացրեց, որ այդ պատահել է ուշ երեկոյան, տուն վերադառնալու ճանապարհին, երբ Սիրանուշը քայլելիս է եղել ոտքով, մեն-մենակ: Խավարի միջից դուրս է թռել մի ստոր արարած, գուցե մի քանիսը, և հափշտակել են նրան: Իսկ նա, ամոթից դրոպած կամ գուցե մտածելով, որ միևնույնն է, չեն հավատա նրան, ոչ ոքի չի ասել ոչինչ...

— Սիրանուշ,— արտասանեց Գարեգինը, բայց նրա կոկորդը կծկվում էր խեղդվելու չափ, բառերի փոխարեն հեկեկոցի մեծ գնդեր էին գլորվում այտերով դեպի վար:— Սիրանուշ, ջանիկ, մի՞թե ես կարող էի բարկանալ քեզ վրա՝ դժբախտությանդ համար... Տեսնեիր, թե ինչպիսի սրբությամբ էինք մենք վերաբերվում թշնամիների կողմից լվված մեր քույրերին, տեսնեիր, թե որքան էին գուրգուրում և մխիթարում նրանց ամուսիններն ու սիրեցյալները դրանից հետո, որ նորից բախտավոր դարձնեին դժբախտներին: Ես գազա՞ն էի, ի՞նչ է, Սիրանուշ...

Բայց լուսանկարը լուռ էր և միայն ժպտում էր: Եվ դժվար էր հասկանալ՝ ժպտում էր իր Գարիկի սխալ ենթադրությամբ վրա, թե՞ բարի ներողամտության համար... Գարեգինը տարակուսած շարունակում էր նայել: Ոչ ոք չէր կարող ոչ հաստատել նրա ենթադրությունը, ոչ ժխտել:

Իսկ եթե դա բռնի չի՞ եղել, այլ հարկադրությունից ստիպված...

Գարեգինը հիշեց Սիրանուշի հիմնարկի երիտասարդ աշխատակիցներին՝ բոլորն էլ ազնիվ տղաներ, որոնց նույնպես վերցրել էին բանակ: Ո՞վ գիտե, դրանց փոխարինող նոր աշխատակիցների մեջ չի՞ եղել այնպիսի մի բարձրադրյալ, որն աշխատանքից հեռացնելու սպառնալիքով ստիպած լիներ նրան՝ ենթարկվել իրեն...

Բայց Սիրանուշը... Մի՞թե նա թույլ կտար այդպիսի բան: Մի՞թե նա չէր ապտակի և հարցը չէր հասցնի կոլեկտիվի արդարադատությանը...

Եվ հանկարծ դաժան մի միտք եկավ փոխարինեց նրա բոլոր մյուս մտքերը: Իսկ ի՞նչ, եթե չի եղել ոչ բռնություն, ոչ ստիպողական համաձայնություն, ոչ ուրիշ նման մի բան... Պարզապես երեքնկես երկար տարիների սպասումից ներքին մաքառումներից հետո հաղթել է ցանկությունը...

Որ Սիրանուշը չէր կարող նրան հոգեպես դավաճանած լինել, մոռացած և ուրիշին սիրած՝ Գարեգինը դրանում չէր կասկածում բոլորովին: Առավել ևս դաժան անհրաժեշտություն էր թվում նրան այն, որ Սիրանուշը, ամբողջ հոգու թափով սիրելով նրան, տեղի էր տվել ցանկության գայթակղությանը...

Նա հիշեց մի դեպք իր կյանքից: Ինչ-որ կիսավեր փոքրիկ քաղաքում մի երիտասարդ կին դուրս եկավ փողոց և հապճեպ կանչեց նրան: Գարեգինը ներս մտավ՝ զենքը պատրաստ, կարծելով, թե թաքնված թշնամու տեղ է ուզում ցույց տալ կինը: Բայց կինն ասաց. «Ահա երկու տարի է, որ իմ ամուսինը կռվում է ճակատում: Ես սիրում եմ նրան և սպասում եմ, բայց... Զնիիր ինձ հետ այս գիշեր... »:

Գարեգինը վեր կացավ, մոտեցավ կնոջը, սկսեց շոյել նրա գլուխը և խոսել հոգեկան բարձր սիրո, անձնագոհության և նման բաների մասին, բայց կինը կամացուկ ետ տարավ նրա ձեռքն իր գլխի վրայից և ասաց. «Գիտեմ, գիտեմ այդ ամենը, գիտեմ քեզանից լավ...»: Նա ջղաձիգ կոտրատեց իր մատները և ցավագին կծեց շրթունքները: Ըստ երևույթին նա հեշտությամբ չէր ենթարկվել թուլությանը և նրա մեջ դեռ գնում էր տանջալի պայքար: Գարեգինին նա ճանապարհ դրեց, բայց մի՞թե մի ուրիշի հետ չէր իրագործելու իր ցանկությունը...

Դուրս գալով կնոջ մոտից, Գարեգինն ակամայից պատկերացրեց, թե դա Սիրանուշն էր, և մի քանի օր հծծաց խանդից և խոցված ինքնասիրությունից:

Բայց այժմ, տարիների դպրոցից հետո, Սիրանուշի մահվանից հետո, երբ մահն իր սև քողն էր տարածել բոլոր հանգած կրքերի, ցանկությունների և զգացումների վրա, երբ նա տարել էր ամենակարևորը, ամենամեծը, երբ տարել էր կյանքը, այժմ Գարեգինն այլ կերպ էր մտածում այդ ամենի մասին: Նա գիտեր, իհարկե, թե ինչ մեծ ուժ է մարտիկի համար հեռու թիկունքում մնացած նրա ընկերուհու անձնվեր հավատարմությունը: Նա գիտեր նաև, թե ինչ մեծ մխիթարություն է այն գիտակցությունը,— գուցե մի քիչ անձնասիրական,— որ երբ դու տանջվում ես այնտեղ, ցեխի մեջ և գնդակների տարափի տակ, քո սիրեցյալն էլ այստեղ է տանջվում քեզ համար և ոչ թե անհոգ ծիծաղում է ուրիշ տղամարդու թևերի մեջ: Գարեգինն ասում, արհամարհում էր թեթևամիտ

կանանց, գարշում էր նրանցից, նրանց համարում էր իր անձնական թշնամին: Բայց այն բանին, որ կինը կարող էր մի կարճ պահ հանձնվել իր թուլությանը և ապա դառնորեն զղջալ ու տանջվել, նա նայում էր միայն խղճահարանքով և կարեկցությամբ: Տղամարդկանց նա ներում էր, բայց ներում էր ոչ թե նրա համար, որ համարում էր նրանց արտոնված սեռ և դրանով ուզում էր արդարացնել նաև իրեն: Ընդհակառակը, նա իրեն արդարացնելու ոչինչ չուներ, պատերազմի բոլոր տարիներին նա հավատարիմ էր մնացել իր Սիրանուշին՝ թե հոգով և թե մարմնով: Իսկ տղամարդկանց նա ներում էր, որովհետև համարում էր այդ հարցում կանանցից ցածր, անպիտան արարածներ, և նրա ներման մեջ ավելի արգահատանք կար, քան ներողամտություն:

Նա նորից նայեց լուսանկարին: Իր գաղտնիքն իր հետ տարած, այլևս հավիտյան լուռ, ապակու տակից նրան էր նայում նրա կինը: Ինչպե՞ս էր պատահել այդ... Բայց ինչպես էլ որ պատահել էր, մի՞թե Գարեգինը կարող էր մեղադրել նրան...

Նա մտովին խոսում էր կնոջ հետ, բայց ամեն րոպե, ամեն վայրկյան նրա գիտակցությունը ծակում էր այն միտքը, որ իզուր է նա խոսում դիմողական ձևով, որովհետև Սիրանուշը չկա...

Հանկարծ նա նայեց դեպի լուսամուտը: Մթնել էր: Եվ նույնպես հանկարծ, այնքան արագ, որ նա ժամանակ չգտավ մտածելու, հիշեց, որ արդեն ուշ է, ե՞րբ պիտի վերադառնա Սիրանուշը քաղաքից... Եվ նույն պահին, նորից հիշեց, որ դա սուտ էր, իսկ իրականությունն այն է, որ իմացավ հետո.— Սիրանուշը չէր վերադառնալու երբեք...

Գլուխ երկրորդ

1

Առավոտյան, երբ Գարեգինն արթնացավ, նրա առաջին անգիտակցական ռեֆլեքսը եղավ դարձյալ նույնը — մի՞թե դեռ չի եկել Սիրանուշը քաղաքից... Բայց հետևյալ իսկ վայրկյանին հիշելով նախորդ օրը, նա նորից սկսեց լուռ արտասվել:

Նա պառկած էր հագուստով, Սիրանուշի անկողնի վրա: Մայրը նրան ծածկել էր մի բարակ վերմակով: Վաղ առավոտվա արևն արդեն ընկել էր այգու զանազան մասերի վրա, և ամենուրեք զվարթ ճովողում էին թռչունները:

Իսկ Սիրանուշը չկար...

Գարեգինը ցատկեց ոտքի: Անհնար էր պառկել: Շարունակ թվում էր, թե շնչառության համար օդը պակասում է: Նրա աչքովն ընկավ աթոռը, որի մեջքի վրա մայրը գցել էր կոստյում, սպիտակեղեն, նստելատեղում դրել էր կեպի, գուլպաներ, հատակի վրա՝ կիսակոշիկներ...

Եվ իբրև փրկության փարոսի, Գարեգինը հանկարծ կառչեց այդ ամենից: Հագնել, այնուամենայնիվ, գուցե վերածվել նախկինին...

Նա արագ հանեց համազգեստը, վերցրեց սրբիչը և սպիտակեղենով դուրս գնաց լվացվելու: Լվացարանն այնտեղ էր, հին տեղում, պատի տակ:

Երբ նա դուրս եկավ այգի, մայրը և այգու գիշերային պահակը կանգնած զրուցում էին: Ըստ երևույթին, ծերունին Գարեգինի պատճառով էր դեռ այդտեղ, չէր գնացել քնելու: Տեսնելով երիտասարդին, նա իսկույն մոտեցավ, ուրախ շնորհավորեց նրա վերադարձը, ապա և իսկույն տխուր սեղմեց նրա ձեռքը:

Գարեգինը լվացվեց, արագ բարձրացավ վեր և մտավ իր սենյակը: Նրա աչքերը հանդիպեցին նկարին՝ սեղանի վրա: Պայծառ առավոտի՞ց էր, երիտասարդական կենսաառաջնությունի՞ց, թե պարզապես այն պատճառով, որ Գարեգինի համար Սիրանուշն անմահ էր,— նա նորից դիմեց նրան, և դիմեց համարյա առանց թախիծի, ինչպես կենդանի մարդը կենդանի մարդուն:

— Բարի լույս, Սիրանուշ...

Նա սկսեց հագնվել: Անդրավարտիքը հագնելուց հետո նա անզայաբար ձեռքը տարավ գրպանը և հանեց այնտեղից մաքուր լվացված, արդուկած և ինամքով ծալած թաշկինակը: Նա հասկացավ՝

Սիրանուշն էր դրել այնտեղ: Պիջակը հագնելիս նա ծոցագրպանում ինչ-որ կոշտ բան զգաց և նույնպես, ձեռքը տարավ, հանեց: Դրամ էր, որ նույնպես Սիրանուշն էր դրել այնտեղ:

Խանդաղատանքի ժպիտը դեմքին նա նետվեց դեպի կինը՝ սեղմելու համար նրան իր կրծքին, բայց այնտեղ միայն լուսանկարն էր, իսկ Սիրանուշը չկար...

Գարեգինը կտրուկ կանգ առավ կես քայլի վրա, և սառած, ավելի՛ զարմանքով, քան վշտով, սկսեց նայել լուսանկարին:

Եվ հանկարծ, նա մի մտքից սարսափահար, ետ-ետ գնաց, գլորեց աթոռն իր ետևում, չնկատեց, հասավ լուսամուտին, կանգ առավ ակամա:

— Ես եմ սպանել Սիրանուշին,— ասաց նա:

2

— Ես եմ սպանել Սիրանուշին,— ասաց նա՝ հայտնագործությունից սարսափահար: Այժմ այդ նրա համար պարզ էր և անհերքելի, որովհետև նա իրեն հիշեց այնպես, ինչպես կար հունիսի քսաներկուսին: Մեկնելիս, կնոջը հրաժեշտ տալով, նա ասաց.

— Տես, Սիրանուշ, չդավաճանես ինձ...

Եվ թեթևակի, ոչ իհարկե լոջորեն, այլ այնպես, մտերմաբար, մատը թափ տվեց նրա վրա:

— Ի՞նչ ես դուրս տալիս, Գարիկ,— բարկացավ կինը:

— Ես դա այնպես եմ ասում,— արդարացավ Գարեգինը,— համենայն դեպս:

Եվ գնաց:

Եվ կինը դավաճանեց:

Եվ կինն անշուշտ զգաց, թե ինչ ծանր, անուղղելի հարված հասցրեց նա իրենց երջանկությանը՝ կամա, թե ակամա:

Որ Գարեգինը չէր կարող Սիրանուշի ոչ մի մագին դիպչել, այդ պարզ էր սկզբից՝ և Գարեգինի համար, և Սիրանուշի: Բայց դրա կարիքն էլ չկար, որպեսզի Գարեգինը լիներ կատարելապես դժբախտ, եթե նույնիսկ Սիրանուշի հետ պատահած դեպքը կատարվել էր ակամա: Դրանում անխախտ համոզված էր եղել Սիրանուշը, որովհետև նա գիտեր Գարեգինին, գիտեր նրան ողջ կյանքում, մինչև բաժանման օրը... Դեռ մանուկ հասակում, կանչ ու ծիծաղով այգում վազվզելիս, Գարեգինը հանկարծ բռնում էր իր փոքրիկ ընկերուհու թաթիկը և կոպիտ քաշելով, մռայլ հարցնում էր.

— Դու ո՞ւմ Սիրանուշն ես...

— Զո՛ւր...— հեզ պատասխանում էր նա:

— Դու միայն ո՞ւմ հետ ես միշտ խաղ անելու...

— Միայն քեզ հետ...

Եվ նորից զվարթանում էր Գարեգինը, և նորից էին վազվզում նրանք կանչ ու ծիծաղով:

Երբ նրանք մեծացան և արդեն սիրում էին իրար, տարբերությունը միայն այն էր, որ Գարեգինը նույն հարցը տալիս էր ավելի հաճախ և պահանջում էր ավելի համոզիչ հավաստիացումներ:

— Սիրանուշ,— հանկարծ ասում էր նա՝ համբույրն ընդհատելով և թևերը թուլացնելով նրա մարմնի շուրջը,— ո՞ւմ ես դու...

— Զո՛ւր...

— Կրկնիր...

— Բոնը...

— Էլի ասա,— խնդրում էր Գարեգինը՝ աչքերը փակելով:

— Բոնը, քոնը, քոնը, քո երեխան, քո աղջիկը, քո կինը... Գո՞հ ես, թե՞ Էլի...

— Որ մեռնեմ՝ դու ի՞նչ կանես...

— Որ մեռնես՝ ես էլ կմեռնեմ:

— Որ գժվե՞մ...

— Ես կմեռնեմ:

— Որ հիվանդանամ...

— Էլի կմեռնեմ:

— Իսկ եթե միայն հարբո՞ւիս ընկնեմ...

— Կմեռնեմ,— պնդում էր Սիրանուշը՝ համոզված, բայց իսկույն փոխում էր մտադրությունը:— Ոչ, չեմ մեռնի, հարբուիս ի՞նչ է որ... Կառողջանաս, կսկսես ուրիշին սիրել...

Գարեգինն ապշած նայում էր Սիրանուշին և չէր կարողանում հասկանալ, թե ինչպե՞ս կարելի է բացի նրանից ուրիշին սիրել և որտեղի՞ց են Սիրանուշի մոտ այդպիսի հիմար մտքերը:

Ողջ կյանքում միայն մի անգամ Սիրանուշը մի անզգույշ կատակ արեց Գարեգինի հետ, որի համար այնքան զղջաց անմիջապես:

Չարաճճիությամբ, որ հատուկ է ամեն մի սիրված աղջկա, նա ուզեց մի փոքր ծիծաղել իրենով խենթացած Գարեգինի վրա:

— Գիտե՞ս, Գարիկ, մեր դասարանում մի տղա կա, որ քեզանից շատ է դուր գալիս ինձ...

— Ո՞վ է,— մեռելի պես գունատվեց Գարեգինը:

— Չե՞ս նկատել, թե ես ումն եմ վերջին ժամանակներ այնքան երկար նայում:

— Ո՞ր մեկն է,— ամբողջ մարմնով դողաց Գարեգինը:

Սիրանուշը լրջացավ և հարկադրվեց ժամանակից շուտ ավարտել կատակը:

— Սուտ էի ասում,— բացականչեց նա ծիծաղելով,— ինչո՞ւ վախեցար:

— Ոչ, ոչ, սուտ չէիր ասում... Դու հիմա ես սուտ ասում, որ ինձ հանգստացնես...

— Սուտ էի ասում, Գարիկ ջան,— կրկնեց աղջիկը՝ թևերը փաթաթելով նրա պարանոցով,— սուտ էի ասում, մռայլիկս, ես ո՞ւմ կարող եմ նայել՝ բացի քեզանից...

— Գնա,— ասաց Գարեգինը՝ աղջկա թևերը վար առնելով:— Դե, իհարկե, ես քեզ ձանձրացրել եմ, համարյա ծնված օրվանից միշտ քեզ հետ եմ... Գնա քու նոր տղայիդ մոտ...

— Այս ի՞նչ հիմարությունն էր՝ դուրս տվեցի,— ասաց աղջիկը՝ զղջումից մատները կոտրատելով:

— Իհարկե, պատահաբար դուրս թռավ բերանից...

— Վերջ տուր, Գարիկ, թե չէ լաց կլինեմ...

— Մի լաց լինիր, ես շուտով կմեռնեմ, իսկ դու ազատ կլինես քու տղայի հետ...

Սիրանուշն իրոք, սկսեց լաց լինել, իսկ Գարեգինը, առանց նրան հանգստացնելու, նստել էր ինքն իր մեջ ամփոփված և տանջվում էր խանդից:

Յետևյալ օրվանից, կասկածամտության տեղիք չտալու համար, Սիրանուշը դասարանում այլևս չէր խոսում ոչ մի տղայի հետ, իսկ եթե նրանք էին դիմում նրան, նա պատասխանում էր կարճ և կոպիտ: Գարեգինի հետ մի նստարանի վրա նստած, նա հարսի հեզությամբ գլուխը խոնարհած,

աշխատում էր ոչ մի տղայի չնայել պատահաբար: Իսկ նրա կողքին նստած Գարեգինը խանդից մթնում էր ամենափոքր առիթով կամ ավելի ճիշտ՝ առանց առիթի...

Յետագայում միշտ, աղջիկն ուժով էր զսպում իր մեջ իր խանդոտ տղայի հետ նորից խաղալու ուժեղ ցանկությունը, որ երբեմն այնպես անդիմադրելի, տիրապետում էր նրան: Նրան դուր էր գալիս և՛ տղայի խելագար խանդը, և՛ այն, որ տղան այդպես և այդքան սիրում է նրան: Բայց զգուշանալով նորից խախտել հավատը, որ երկար ժամանակվա ընթացքում հազիվ էր վերականգնել նրա մեջ, Սիրանուշը միայն բավականանում էր զվարճությամբ վերհիշելով այդ միակ դեպքը և Գարեգինի սև ամպ կտրվելը:

Ինչպե՞ս, ուրեմն նա, ճանաչելով Գարեգինին, կարող էր կենդանի մնալ և հանդիպել նրան՝ ուրիշի վեց ամսական երեխան արգանդում:

— Ոչ, ոչ,— մրմնջաց Գարեգինը,— ոչ, ոչ, ամեն ինչ ավելի լավ է, քան մահը... Բայց ոչ, ես այդ էլ սխալ եմ ասում, ոչ թե ամեն ինչ լավ է՝ մահվան համեմատ, այլ դատարկ բան է, իսկ միակ լուրջը, ահռելին, անուղղելին՝ մահն է... Թող ուրիշի կինը լիներ Սիրանուշը, միայն թե ապրեր, ապրեր...

«Ուրիշի կին» խոսքերը նրան անհաճո ցնցեցին: Չէ թե նա զղջաց իր ասածի համար, այլ զգաց, որ միևնույնն է, ինչ էլ որ լիներ, նրանք նորից միմյանցը պիտի լինեին՝ միշտ-միշտ... Նրանք սիրում էին իրար և դա էր ամենագլխավորը, միակ կարևորը: Ոչ մի ուժ չէր կարողանա բաժանել նրանց՝ բացի մահվանից, ոչ մի ուժ, ոչինչ, ոչինչ, ոչ պատահական ծանր սխալը, ոչ ուրիշի երեխայի ծնունդը...

— Եթե գիտենայիր, Սիրանուշ,— նորից դիմեց Գարեգինը նկարին,— եթե գիտենայիր այս բոլորը...

Գլուխ երրորդ

1

Էջմիածնից Երևան տանող ճանապարհով քայլում էր Գարեգինը: Նախորդ օրը, Երևանի կայարանից ուղղակի ավտոբուս նստելով և գնալով տուն, նա ենթադրում էր, թե առնվազն մի շաբաթ դուրս չէր գալու այնտեղից՝ մորից և կնոջից կարոտն առնելու համար:

Նա երագում էր, թե Սիրանուշի հետ միասին նորից կշրջի այգու ճանապարհներով ու կաճաններով, կանգ կառնի յուրաքանչյուր հաստաբուն ծառի ետևում և կհամբուրի նրան, կանգ կառնի յուրաքանչյուր հիշատակելի անկյունում և կնոջ հետ կնայի դրան, և անցյալը, գեղեցիկ անցյալը, կվերադառնա...

Բայց ահա այսօր, հազիվ առավոտ եղած, նա շտապում է հեռանալ տնից՝ առանց նույնիսկ այգին ոտք կոխելու...

Երբեք նա այնպես չէր զգացել մարդկանց մեջ լինելու պահանջը, երբեք նա այնպես չէր զգացել մենակությունը, կամ ավելի ճիշտ՝ նա երբեք մենակություն չէր զգացել: Եվ այդ ոչ միայն այն պատճառով, որ եղել էր Սիրանուշի հետ, այլև, Սիրանուշի հետ միասին նա շարունակ իր շուրջն զգացել էր մարդկանց ներկայությունը:

Տարօրինակ զգացում. իր մոր և կնոջ հետ օրեր շարունակ Երևանի այդ հեռու և սակավամարդ անկյունից դուրս չգալով անգամ, նրան թվացել էր, թե իրենք շատ են, թե իրենց հետ են բոլոր ծանոթ և անծանոթ մարդիկ: Թերթը՝ առավոտյան ստացած, ռադիոն՝ ամբողջ օրն ակունք, սայլը, որ եկել էր միոգ տեղափոխելու, բանվորները, որ եկել էին այգում աշխատելու, Վերգինեն և ամուսինը, որ բարկանալով նրանց վրա՝ այդքան հեռու ապրելու համար, այնուամենայնիվ այցելում էին հաճախ, գիշերային պահակը, որ թեև ապրում էր շատ մոտ, բայց երբեմն ցերեկը մնում էր այգում քնելու և, իհարկե, քնելու փոխարեն սկսում էր զանազան պատմություններ անել, դիրեկտորները, հողաչափները, ինժեներներն բանաստեղծները, որ այցելում էին միասին և ծրագրում ու պատկերացնում միացնել նախկինում մասնավոր, իսկ այժմ սովորական պատկանող մոտակա այգիները, քանդել դրանք իրարից բաժանող ներքին պարիսպները, վերածել մի համատարած, ահագին տնտեսություն՝ լաբորատորիայով, ինստիտուտով, պահեստներով,

պտղամշակման կայանով, բնակելի շենքերով — այդ բոլոր մարդիկ, իբրև իրենց սման այլ անթիվների ներկայացուցիչներ, մենակյաց սիրահար զույգին կապում էին լայն աշխարհի հետ:

Իսկ այժմ այդ զգացումը չքացել էր: Պատահարը, որ տեղի էր ունեցել նրա և Սիրանուշի հետ, առանձնացրել էր Գարեգինին մյուս բոլոր մարդկանցից, դրել էր տարբեր կեցության մեջ: Նա տարակուսում էր, թե ինչո՞ւ բանակից վերադարձած մյուս մարդիկ ունեին կին, ընտանիք, Նորից երջանիկ էին, իսկ ինքը, նրանց հավասար ընկերը, նրանց հետ միասին կռիվներն իր ուսերի վրա տարած և հաղթանակը նվաճած, պետք է երեխայի պես լաց լիներ մի ամբողջ օր և կյանքի մյուս բոլոր օրերը մնար դժբախտ... Ո՞վ էր սահմանել նրա համար այդ հատուկ կացությունը, այդ անարդար վիճակը, ո՞վ էր գրկել նրան՝ հաղթանակի պտուղը ճաշակելուց, ո՞վ ուներ այդպիսի իրավունք... Արդյո՞ք ոչ ռազմաճակատից խուսափած մի սրիկա, որի համար հանուն հայրենիքի պաշտպանության ստեղծված լուսաքողարկումը լույս կապտավոր պայման էր՝ կորզելու մարդկանցից նրանց կոպեկները, հագուստը, պատիվը... Կամ, կասկածելի իրավական հիմունքներով թիկունքում մնացած մի դատարկապորտ, որն իր արհեստն էր դարձրել միայնակ կանանց մխիթարելը և որի շուրթերում սիրո նույն սրբազան խոսքերն էին, իհարկե, ինչպես բոլոր սիրող մարդկանց մոտ, միայն այն տարբերությամբ, որ դրանք ասվում էին բազմաթիվ կանանց...

Կարևոր չէր և բոլորովին նշանակություն չունե՞ր՝ բռնի՞ ուժով էին կատարել հանցանքը, թե՞ օգտվելով թուլության պահից: Կարևորն այն էր, որ մեկը, հանուն իր թոպեական բավականության, խորտակել էր երկու մարդու երջանկությունը, գրկել էր մեկին կյանքից, մյուսին՝ նրա ողջ կյանքի անբաժան ընկերուհուց, նրա առաջին և վերջին սիրուց...

Չունդալով, ետևից եկավ ավտոբուսը և անցավ: Գարեգինը, որ մի կողմ էր քաշվել՝ ճանապարհ տալու համար, տեսավ մարդկանց արագորեն թարթող-անցնող դեմքերը, որոնցից յուրաքանչյուրը, մյուսից տարբեր, այդքան արագ չէր կարող թողնել որևէ առանձին տպավորություն, բայց բոլորը միասին թողեցին մի ընդհանուր տպավորություն. նրանք բոլորը երջանիկ էին, համենայն դեպս, ոչ դժբախտ:

Եվ ահա, իր դժբախտության հետ միասին, Գարեգինը գնում էր դեպի նրանց, դեպի հասարակությունը, զգալու համար թեկուզ միայն այն, որ բոլորը բաժանում էին իր հետ իր մաքուր, իր սուրբ, իր խոր և մանավանդ՝ այնքան անարդարացիորեն բաժին ընկած վիշտը...

2

Գարեգինն ու Սիրանուշը պատերազմից ընդամենը մի տարի առաջ ավարտել էին Գյուղատնտեսական ինստիտուտը: Գարեգինն սկսել էր դասավանդել այգեգործական տեխնիկումում, իսկ Սիրանուշն աշխատում էր բուսաբանական ինստիտուտի գիտահետազոտական լաբորատորիայում՝ պատերազմից հետո համատեղության կարգով ստանձնելով նաև գյուղատնտեսի պարտականությունը՝ իրենց ապրած սովխոզում:

Եվ այժմ, բուսաբանական ինստիտուտի շենքին մոտենալիս, Գարեգինը Նորից հուզվում էր այնպես, ինչպես նախորդ օրը՝ դեպի իրենց տուն գնալիս: Սիրանուշը չկար, բայց այն ամենը, ինչ մնացել էր նրանից՝ նրա հուշը, նրան ճանաչողները, նրա աշխատավայրը, այն առարկաները, որոնց դիպել էր նրա ձեռքը, Գարեգինի համար դարձել էին նվիրական: Նա ուզում էր տեսնել այն մարդկանց, որոնք տարիներ շարունակ աշխատել էին Սիրանուշի հետ, ուզում էր լսել նրանց, մտովին տեղափոխվել իր բաց թողած այդ անցյալը, գոնե մի քիչ, ևս մի քիչ, լինել Սիրանուշի հետ...

Դեռ միջանցքում հանդիպեց մի ծանոթ երիտասարդ աշխատակից, որը նրանից առաջ էր գորացրվել և Նորից աշխատում էր իր նախկին տեղում:

— Գարեգի՞ն, — ասաց նա հարցական ու զարմացական և ջերմ բարևեց: Չթողնելով նրա ձեռքը, նա Նորից սեղմեց այն, և այս անգամ՝ ցավակցաբար: Ապա հոգատարությամբ, իր օգնությունն առաջարկելու ձևով, հարցրեց.

— Ո՞ւմ ես ուզում...

Իսկապես, ո՞ւմ է ուզում, ի՞նչ է ուզում Գարեգինը, մի՞թե կարող է ասել...

— Ես այնպես...— ասաց նա:

— Խնդրեմ,— հասկանալով, ասաց աշխատակիցը,— այդ դեպքում մտնենք լաբորատորիա...

Նրանք մտան ներս: Կուբերի, ապակե անոթների, ձագարների, սրվակների, խողովակների, դեղատնային կշեռքների, մանրադիտակների և ուրիշ փայլուն գործիքների արանքներից երկար սեղանների ետևում շարքերով նստած աղջիկները նայեցին նրան: Խալաթների և գլխանոցների սպիտակ ֆոնի վրա նրանց մազերը և աչքերն առավել ևս սև էին երևում, և նրանք բոլորը թվում էին միմյանց նման:

Եղան ճանաչողներ: Մի աղջիկ, լսելի շշնջաց հարևանուհու ականջին.

— Սիրանուշի ամուսինը...

Ապա մյուսներն ևս տեղեկացան նրա ով լինելը և սկսեցին նայել մտերիմ ցավակցությամբ:

Գարեգինը նայում էր լուռ, վշտաբեկ: Բոլորն իրենց գործի վրա էին, իսկ Սիրանուշը չկար:

— Բարև ձեզ, ընկեր Գարեգին,— ողջունեց հին աշխատակցուհիներից մեկը՝ տեղից վեր կենալով:— Թույլ տվեք շնորհավորել ձեր վերադարձը...

Նա խոսում էր չափազանցված աշխույժ և զվարթ...

— Բարև...— ասաց Գարեգինը՝ նրա անունը փնտրելով:

— Դուք բոլորովին չեք փոխվել, ընկեր Գարեգին, ճիշտ այնպես եք, ինչպես անցյալում, երբ ամեն օր գալիս էիք գործից հետո Սիրանուշին վերցնելու...

Գարեգինը լուռ էր: Մի գեղեցիկ աղջիկ, համարյա պատանի, թախծոտ ժպիտով նայելով Գարեգինին, ասաց.

— Մենք շատ էինք սիրում Սիրանուշին...

Իսկ մի երրորդն ասաց.

— Թեև ես երբեք չեմ տեսել ձեզ, բայց իսկույն ճանաչեցի, որովհետև Սիրանուշը շատ էր նկարագրել ձեզ...

— Նա այնտեղ էր նստում,— ցույց տվեց մի չորրորդը:

Գարեգինը նայեց: Ծանոթ հին տեղում այժմ նստած էր մի ուրիշ աղջիկ:

— Ի՛նչ խոսք, Սիրանուշը շատ կարևոր գիտական ուժ էր,— հուզմունքը զսպելու համար լուրջ և պաշտոնական տոն բռնեց երիտասարդը, որ մտել էր Գարեգինի հետ:— Եվ, իհարկե, լավ հասարակական աշխատող: Նախանցյալ ձմռանը, երբ նրա համար, իբրև բանակայինի կնոջ, վառելիքայտ էինք հատկացրել, նա հրաժարվեց դրանից և բավարարվեց սովորոգի այգիներում սեփական միջոցներով հավաքած ցախով:

Աղջիկներից մեկը հեռացավ հավաքվածներից և վերադարձավ մի բլրկնոտ ձեռքին:

— Վերցրեք, սա Սիրանուշինն է...

Գարեգինը համարյա հափշտակեց նրանից բլրկնոտը և տենդոտ մատներով սկսեց թերթել: Շուրջը հավաքվածները և սեղանների ետևում նստածները կարեկցությամբ էին նայում, թե ինչպես երիտասարդը տենդոտ մատներով թերթում էր բլրկնոտը և փնտրում այնտեղ ինչ-որ բան. մի բան, որ Սիրանուշը չէր ասել ոչ ոքի, չէր գրել ոչ մի տեղ... Բայց բլրկնոտում ևս չկար ուրիշ ոչինչ՝ բացի մասնագիտական հատուկտոր նշումներից: Միայն մի էջի վրա, ըստ երևույթին՝ մտածկոտ մի թուղթին, աղջիկը խազմզել էր.— Գարեգին. Գարիկ, Գար..., Գարեգին...

— Նա ամբողջ ժամանակ ձեր մասին էր մտածում և ձեզ էր սպասում,— ասաց մի կին՝ կարծես հաղորդելու համար նրան այն, ինչ չկար բլրկնոտում:— Ես և նա իրար կողքի էինք նստում և հաճախ խոսում էինք ձեր մասին, իմ ամուսնու մասին... Նա էլ է վերադարձել:

Խոսակցությունն սկսեց ստանալ ավելի և ավելի ընդհանուր բնույթ: Հավաքվածները գնում էին, սեղանների ետևից մոտենում էին ուրիշները, և նրանցից յուրաքանչյուրը, ծանոթ, թե անծանոթ, տալիս էր այն, ինչ որ ուներ: Մեկը վերհիշում էր, թե ինչպես Սիրանուշը մի օր լաց էր եղել երկար ժամանակ ամուսնուց նամակ չստանալու համար, երկրորդը, որ նա կազմակերպել էր չորացրած մրգի ծանրոցներ ուղարկելը ռազմաճակատ, երրորդը, որ վերջին օրերը Սիրանուշը չափազանց տխուր էր և մտացրիվ...

Եվ ոչ ոք, ոչ մեկը, չէր գտնում մեղադրական որևէ խոսք, որևէ ակամա ակնարկ՝ նրա հասցեին: Ճանաչելով նրան իբրև սիրող և անձնվեր ամուսնու, հոգատար և անկեղծ ընկերուհու, խելոք և լուրջ աշխատակցուհու, նրանք նայում էին մանկական միամիտ տարակուսանքով, թե ինչո՞ւ, այնուամենայնիվ, Սիրանուշն այժմ չկա...

Գարեգինը լսում էր նրանց և տանջվում: Նրանց խոսքերի և պատմությունների մեջ նա ճանաչում էր իր կնոջը: Այո, այո նա էր, Սիրանուշը, որին նա գիտեր, և Սիրանուշը, որին նա չգիտեր: Այո, իհարկե, հենց այդպես էլ կարող էր ասել նա՝ պատերազմի ծանր օրերին, ճիշտ այդպես էլ պիտի վարվեր նա՝ հաղթանակի լուրը լսելիս...

3

Ծանոթ երիտասարդը, որ դուրս էր գնացել, ներս մտավ նորից և հայտնեց Գարեգինին, որ դիրեկտորը նրան խնդրում է իր մոտ: Գարեգինը հրաժեշտ տվեց և ելավ դուրս:

Կաբինետում, դիրեկտորը— գեղեցիկ և համակրելի դեմքով մի հաստիկ տղամարդ սեղմեց Գարեգինի ձեռքը և մի քանի խոսքով հայտնեց իր ցավակցությունը:

— Դուք, իհարկե, ինձ կհասկանաք,— ավելացրեց նա,— որքան էլ ցավում էինք, այնուամենայնիվ, չէինք կարող չդատապարտել նրա արարքը, այսինքն՝ այն, որ նա, փոքրոգի կերպով ինքնիրեն...

— Այո, այո,— ասաց Գարեգինը մեքենայաբար:

— Իսկ հիմա, թույլ տվեք...

Նա բացեց գրասեղանի դարակը:

— Այսպես թե այնպես, ամենայն իրավամբ սա պատկանում է Սիրանուշին...

Նա հանեց «Հայրենական պատերազմի ժամանակ քաջարի աշխատանքի» մեդալն ու գրքույկը և հանձնեց Գարեգինին:

— Ի սրտե ցավում եմ, որ հետմահու...

Եվ ճանապարհ դնելով նրան, դռան մոտ նա նորից հայտնեց իր ցավակցությունը.

— Ի սրտե ցավում եմ ձեր և մեր ծանր կորուստի համար: Երբ երկու օր նա չէկավ աշխատանքի, մենք բոլորս հասկացանք, որ դա կարող էր պատահել միայն որևէ արտակարգ առիթով:

«Հիվանդացել է»,— եղավ իմ առաջին միտքը: Պատրաստվում էի անձամբ գնալ ձեր տուն՝ տեղեկանալու, բայց նրա ընկերուհին, կարծեմ Վերգինե, նույն օրը բերեց կատարվածի լուրը... Ամուր կացեք և մի զգաք ձեզ մենակ: Մենք ձեզ հետ ենք... Նրան, ինչպես գիտեք, դեռ փնտրում են: Ծանր է, իհարկե, այդ մասին խոսելը, բայց մենք կանենք մեր ձեռքից եկածը...

4

Բուսաբանական ինստիտուտից Գարեգինը գնաց Վերգինեի մոտ: Չէր ենթադրում, թե նա տանը լիներ— ամուսնու բանակ գնալուց հետո անշուշտ աշխատում էր որևէ տեղ— բայց անհամբերությունը հարկադրեց նրան: Եվ որքան մեծ եղավ նրա զարմանքը, երբ Վերգինեին գտավ սենյակում, անգործ նստած:

— Գարեգին,— բացականչեց նա՝ վազելով ընդառաջ:

— Բարև...— սեղմեց Գարեգինը նրա ձեռքը՝ շփոթված նայելով նրա դեմքին: Ինչ-որ նոր և խորթ բան այնտեղ՝ հին բարեկամուհուն դարձնում էր համարյա անճանաչելի: Չէ թե դիմագծերն էին փոխվել, այլ ընդհակառակը, զարմացնում էր այն, որ դեմքը մնացել էր նույնը, բայց դարձել էր ուրիշ: Գուցե ամուսնու մահն էր պատճառը...

— Ե՞րբ ես եկել, այսօ՞ր, երե՞կ, շնորհավորում եմ, շատ չես փոխվել, նույնն ես, համազգեստդ էլ, իհարկե, հանել ես իսկույն, այնպես որ, մենք քեզ չտեսանք զինվորական տարազով, ինչպե՞ս ես զգում քեզ, գիտե՞ս սա մեծ բախտավորություն է, որ վերադարձել ես ողջ-առողջ,— առանց վերջակետերի, ավելի շուտ՝ հուզմունք ձևացնելով, քան թե իսկապես հուզվելով, վրա տվեց կինը: Այդ ևս նոր էր և խորթ՝ նախկին անկեղծ ու մտերիմ Վերգինեի մոտ...

— Երեկ եմ եկել,— տրված հարցերից միայն պատահական այդ մեկին պատասխանեց Գարեգինը,— շտապեցի գալ քեզ մոտ, թեև համոզված չէի, թե տանը կլինես: Մի՞թե չես աշխատում:

— Ո՛չ...— ծոր տվեց կինը:

— Ինչո՞ւ:

— Ի՞նչ աշխատավարձ պիտի ստանամ: Շուկայի գներով՝ մի կիլո յուղի փող: Արժե՞ դրա համար:

— Բայց սպասիր,— հակաճառեց Գարեգինը տարակուսած,— ինչպե՞ս ես ապրում ուրեմն:

— Ապրում եմ,— պատասխանեց կինը: Ապա կարճ լռությունից հետո, երևի ինքն էլ զգալով տված պատասխանի անբավարարությունը, ավելացրեց,— վաճառեցի մի սենյակս, իրերի մի մասը...

Գարեգինը նոր միայն նայեց շուրջը: Սենյակը համարյա դատարկ էր: Մյուս սենյակի դուռը փակ էր և վրան կախարան ամրացված:

Անախորժության ծանր զգացմունքը պաշարեց Գարեգինին: Որքան որ նրան հաճելի էր իրենց տան նույնությունը նախկինի հետ, նույնքան անհաճ էին Վերգինեի տան փոփոխությունները: Նրանք անհաճո կլինեին նույնիսկ այն դեպքում, եթե լինեին դրական փոփոխություններ, որովհետև Գարեգինն ուզում էր ամեն ինչ տեսնել ընդհատված կետի վրա և այդտեղից էլ շարունակել, ուր մնաց այժմ: Չկային բազմաթիվ ծանոթ առարկաներ, չկար այն սենյակը, որտեղ երբեմն գիշերում էին ինքն ու Սիրանուշը՝ քաղաքում ուշացան օրերին:

— Մի՞թե այսպես ավելի լավ է,— շշնջաց Գարեգինը:

— Լավ չէր, իհարկե, բայց հետո դասավորեցի,— պատասխանեց կինն անորոշ:

Գարեգինը վեր կացավ նստած տեղից, մոտեցավ կնոջը.

— Թույլ տուր, Վերգինե, հայտնել իմ ցավակցությունը...

— Ինչո՞ւ համար,— զարմացավ կինը:

— Ինչպե՞ս թե ինչու համար... Մենք մի զորամասումն էինք նրա հետ, և ես ականատես եղա...

— Ա՛...— ասաց կինը և ձեռքը մեկնեց,— ես շատ, շատ ազդվեցի իր ժամանակին, իսկ Սիրանուշն ուղղակի լալիս էր: Իսկապես,— բացականչեց նա հանկարծ,— չէ՞ որ ես էլ քո ձեռքը դեռ չեմ սեղմել...

Գարեգինը գլուխը կախեց: Այդ ամենի մեջ կար ինչ-որ անբնականություն, ոչինչ իր տեղում չէր: Ամուսնու մահվան լուրն առնելիս Վերգինեն ընդամենը «ազդվել էր շատ, շատ», և միայն Սիրանուշն էր, որ «ուղղակի լաց էր եղել»: Հիմա էլ, Գարեգինի ներս մտնելիս, Վերգինեն կարծես մոռացավ ցավակցություն հայտնել Սիրանուշի համար և հիշեց միայն հետո, համարյա պատահաբար...

— Պատմիր, ինչ որ գիտես Սիրանուշի մասին,— ասաց Գարեգինը:

— Ի՞նչ պիտի իմանամ, Գարիկ, ոչինչ չգիտեմ:

— Ինչպե՞ս թե ոչինչ չգիտես,— ապշեց Գարեգինը:

— Դե իհարկե, Գարիկ: Այդ դեպքը որ պատահել էր՝ ես տեղեկություն չունեի: Ես գիտեի միայն նրա վիճակի մասին: Նա ինձ խոստովանել էր: Միլիցիայից վերադառնալիս մտա փոստ, որովհետև իմ բոլոր նամակները ցպահանջ եմ ստանում, և ստացա Սիրանուշի նամակը: Առանց մեկն ու մեկին մի բան ասելու, ինքն իր մեջ որոշել էր ու կատարել... Էլ ի՞նչ ասեմ քեզ, Գարիկ... Ենթադրում եմ, թե գետը զցած կլինի իրեն: Փնտրում են... Բայց կարող է և չգտնեն: Զի՞չ է պատահում:

5

Վե՛րջ... Ընդամենը... Ա՛յդ է ամբողջը, ինչ մնացել է Սիրանուշից... Կցկտուր հուշեր, թռուցիկ տպավորություններ, և մահը՝ իր շատ հանգամանքներով բոլորին անձանոթ... Այո, մտում է դեռ մայրը, որին նա կինդրի՝ գիշեր ու ցերեկ պատմել Սիրանուշի մասին, պատմել նորից և նորից... Մտում է դեռ այգին, դրա յուրաքանչյուր անկյունը, թուփը... Մտում է բնակարանը, մտում են առարկաները, որոնք շրջապատած են եղել Սիրանուշին...

Իսկ դրանից ի՞նչ... Մի՞թե այդ ամենը միասին կարող են փոխարինել նրա կենդանության ամեն մի վայրկյանը, նրա լոկ մի հայացքը, շրթունքների ամենաթեթև իսկ շարժումը, թեկուզ ձայնը...

Բայց և այնպես, այս բալենու տակ չե՛ր միթե, որ Սիրանուշը՝ տասնչորս տարեկան աղջիկ, ձեռքերը պարզեց վեր, դեպի ծառաբնի վերին մասը, որին նա չէր հասնում և որտեղ դեղնակարմիր սաթի պես փայլում էին խեժի թանձրակները, և ասաց բաղձանքով.

— Կռոճ եմ ուզում...

Իսկ Գարեգինը կռացավ, գրկեց աղջկա ծնկները, աղջկան բարձրացրեց վեր, և նա սկսեց պոկել խեժը և գերագույն ախորժակով ուտել: Աղջկա ծնկները հաված էին տղայի կրծքին, աղջկա յուրաքանչյուր շարժման հետ նրա շրջազգեստը քսվում էր տղայի երեսին, և Գարեգինը երջանիկ էր, աշխարհի չափ երջանիկ, որ գրկել էր իր բախտը, իր սերը, իր միակին...

Իսկ հետո, ահա այստեղ, վեց տարեկան Սիրանուշը հանկարծ գոռաց.

— Օձն ինձ կծեց...

Մոտ ցատկեց Գարեգինը լեղապատառ.

— Ի՞նչ, ե՛րբ, որտեղի՞ց, ցույց տուր...

Իսկ Սիրանուշը միայն ցույց տվեց լեզուն և փախավ...

Իսկ այնուհետև, ահա այստեղ, նա, արդեն իր կինը, կանգ առավ և ասաց.

— Գարիկ, ես հաճախ եմ մտածում, թե ինչպիսի պատահականությունից է կախված մարդու երջանկությունը: Եթե հայրիկը մի քիչ ուշ դուրս եկած լիներ ճանապարհի վրա, իմ բարուրն ուրիշը տարած կլիներ, ես չէի ընկնի ձեր տունը, իսկ քո կինը հիմա կլիներ ուրիշը...

Եվ երկուսով միասին սարսափեցին հազիվ չկատարված այդ դժբախտությունից...

Պատն ի վեր դրված սանդուղքով Գարեգինը բարձրացավ կտուր՝ իր և Սիրանուշի մշտական սիրած վայրը: Այնտեղից, բարձրից, բացվում էր փառահեղ տեսարան դեպի բնակարանի ետևակողմը: Այնտեղ, ուղիղ ոտքերի տակ, Զրազդան գետի հսկայական ձորն էր: Նրանց տան ետին պատը այգու պարիսպը գտնվում էին ձորի բարձր ու դիք պռունկի վրա, պատի պես ուղիղ քարածայռի ուղղակի եզրին: Անհնար էր նայել ներքև: Անդնդախոր ցածրում, արևով ողողված, խշշում էր գետը: Ձորի անմիջապես ափերից սկսած, աստիճաններով իրարից բարձր և տեղ-տեղ նույնպես պարիսպներով իրարից սահմանագծված, գտնվում էին այգիները: Սակայն ձորի կես բարձրության վրա դրանք ընդհատվում էին կտրուկ և միահավասար, դրանից վերև կանգնած էին դիք ժայռերը որոնք վերջանում էին իրենց վրա փռված այգիների հողե պարիսպներով:

Ձորի երկու ծայրերը, բավական տարածությունից այն կողմ, կորչում էին ոլորապտույտների ետևում: Մի ծայրում, մոտիկ ու հստակ, երևում էր Երևանի սքանչելի պանորամա՝ ժայռերի և բլուրների վրա կառուցված հողե խորանարդ տներով, կանաչ այգիներով, ծառերի արանքներից երևացող նորակառույց բազմահարկ շենքերի սպիտակ կորպուսներով:

— Թռչել եմ ուզում,— ասում էր Սիրանուշը՝ երեխա ժամանակ, թե կին, աղջիկ ժամանակ, թե հասուն:

— Հեռու կաց,— գոռում էր սարսափահար Գարեգինը և նրան կոպտաբար ետ էր քաշում կտուրի պռունկից:

— Որ ընկնեմ, ի՞նչ կանես...

— Կծեծեմ:

— Ես արդեն մեռած կլինեմ:

— Հիմար բաներ դուրս մի տա: Նստիր այստեղ:

— Որ ընկնեմ, ի՞նչ կանես...

— Լռիր, Սիրանուշ, լռիր, հոգուս հատոր, ինչո՞ւ ես գվարճանում ինձ տանջելով...

— Ուրեմն դու տանջվո՞ւմ ես ինձ համար:

— Լռիր, լռիր... Եթե մինչև հիմա չգիտես...

— Որ ընկնեմ, ի՞նչ կանես...

— Պահ, զարմացրիր, քեզանից հետո ես կընկնեմ:

— Ինչո՞ւ:

— Որ կես ճանապարհին քեզ բռնեմ:

— Օդի մե՞ջ...

— Ի՞նչ կա որ:

— Կարելի՞ է:

— Հեշտ:

— Փորձենք,— արագ շարժվում էր տեղից աղջիկը:

— Դե, դե, դե...

— Բա ինչո՞ւ ես խաբում:

— Լավ եմ անում:

— Որ ընկնեմ, ի՞նչ կանես... Թող, մի՛ գրկիր: Ասա, ի՞նչ կանես: Մի՛ սեղմիր, շունչս կտրվում է, այ, կբռնվեմ մայրիկին: Ի՞նչ կանես: Մի՛ համբուրիր ինձ: Որ ընկնեմ... Վայ, ի՞նչ գժվեցիր, լավ, լավ, չեմ ընկնի, հանգստացիր...

Ահա այդ կտուրի վրա սովորեց Գարեգինը՝ դողալ Սիրանուշի կյանքի համար: Այդտեղ լինեք, թե ներքևում, դպրոցում լինեք, թե փողոցում, բնակարանում լինեք, թե ավտոբուսի մեջ, Գարեգինն ակնապիշ նայում էր նրան, իր բյուրեղյա երջանկությանը, պատրաստ՝ վտանգի առաջին իսկ վայրկյանին հափշտակել նրան և ամփոփել իր ապահով գրկի մեջ: Երբ կար անելիս աղջիկը հանկարծ ծակում էր մատը, Գարեգինը սարսափահար նետվում էր դեպի նա, նախ խելահեղ համբուրում էր միկրոսկոպային կարմիր կետը, ապա մատից բռնած, ձգում էր աղջկան դեպի լուսամուտը և այնտեղ հաջորդաբար այդ մատը թաթախում էր սպիրտի, յոդի և մի քանի այլ լուծույթների մեջ: Աղջիկը տղայի անսորմալ հոգատարությանը վաղուց ի վեր վարժված և քաջ գիտենալով դիմադրության ապարդյուն լինելը, հեզ հնազանդվում էր նրա բոլոր արարողություններին:

Գիշերները Գարեգինը հանկարծ արթնանում էր, վեր էր ցատկում տեղից, մոտենում էր իր քնած կնոջ անկողնին և ականջ էր դնում շնչո՞ւմ է արդյոք նա... Անկարող այլևս հեռանալ նրանից, նա կամացուկ կիսապառնում էր կնոջ կողքին, թեքում էր նրա գլուխն իր կրծքի վրա և անշարժանում:

Այդպես ապահով էր.— կնոջ փոքրիկ շնչառությունը խողտացնում էր նրա կուրծքը, նա իր գրկում զգում էր կնոջ կյանքը... Իսկ կինը, քնի մեջ զգալով այդ ամենը և քնի մեջ անզամ սովոր ամուսնու խնթություններին, շարունակում էր քնելը...

Եվ ահա, հունիսի քսաներկուսին, Սիրանուշի վրա կախվեց պատերազմի ահռելի վտանգը: Թշնամին սպառնում էր ներխուժել դառը քրտինքով ստեղծած հայրենիքը, ավերել դաշտերն ու գյուղերը, ասֆալտե ճանապարհներն ու փառահեղ քաղաքները, ոչնչացնել մարդկանց, խավարեցնել արևը... Նա սպառնում էր ներխուժել Գարեգինի սիրո այդ խաղաղ անկյունը, սապոզների ու բատինկաների տակ տրորել խաղողի թփերը, վազել հուսահատորեն խուսափող Սիրանուշի ետևից, բռնել որևէ ծառի մոտ, տապալել գետին, բռնաբարել և ապա տեղնուտեղը կրակել նրա քունքի վրա...

Առաջիններից մեկը զորակոչվելով բանակ, Գարեգինը գնաց Սմոլենսկում պաշտպանելու ամբողջ հայրենիքն ու Երևանը: Տեսնելով բազում ավերածությունները, նա շշնջում էր.

— Ոչինչ, նորից կկառուցենք, միայն թե, մարդիկ չզոհվեն...

Իսկ մարդիկ զոհվում էին հարյուրներով, հազարներով... Երեխաներ, ծերեր, կանայք, երիտասարդ սիրահարներ...

Գազազած, ընդհանուր ողբերգության մեջ մոռանալով թե իրեն, թե Սիրանուշին, Գարեգինն սկսեց պաշտպանել նրանց կյանքն ու պատիվը, լուծել նրանց վրեժը: Կտուրի վրայի նրա վախը՝ Սիրանուշի կյանքի համար, վերածվել էր կարմիրբանակայինի անձնագոհության՝ բովանդակ հայրենիքի համար:

Իսկ այժմ, Սիրանուշը չկա... Բայց ամենածանրը, ամենաանհավատալին, ամենամեղմբունելին այն է, որ նա ոչ միայն չկա, այլև չի լինելու երբեք...

Գլուխ չորրորդ

1

Մի քանի անբովանդակ և աննպատակ օրեր ու գիշերներ անցկացնելուց հետո, երբ Գարեգինը դեռ չէր որոշել՝ ինչպես վերսկսել իր կյանքն ու աշխատանքը, մի գիշեր նա հանկարծ արթնացավ կտրուկ և ցատկեց-նստեց անկողնի մեջ: Երբեք, ոչ մի վայրկյան, արթուն ժամանակ նա չէր մտածել այդ մասին, բայց, ըստ երևույթին, այդ հասունացել էր նրա ենթագիտակցության մեջ, և ահա այժմ, ուժգին հարվածի նման, ցնցել, արթնացրել էր նրան:

Վեր ցատկելով անկողնից, նա վառեց էլեկտրականությունը, նստեց և փորձեց սթափվել: Գուցե երագի խաբեությունն էր դա, որ արթնանալուց անմիջապես հետո, այդ առաջին վայրկյաններում, դեռ չէր կորցրել իր հավանականությունը: Պետք էր գտնել անհեթեթությունը, որ պարունակում է յուրաքանչյուր այդպիսի երագ...

Բայց անհեթեթությունն չկար, քնի մեջ ինքնաբերաբար կատարված հաշիվը հստակ էր և սարսափելի...

Ի՞նչ էր պատահել Սիրանուշին՝ մահից ավելի վատ...

Գարեգինի արյունը սառեց նրա ողջ մարմնի մեջ: Նա փշաքաղվեց ոտից գլուխ, նրա ատամներն սկսեցին կափկափել՝ և գիշերային զովից, և սարսափելի գյուտից, և գայրույթից, և ինչ-որ անբացատրելի վախից...

Եթե Վերգինեն մի շաբաթ շարունակ ոչ մի տեղեկություն չի ունեցել Սիրանուշի հետ պատահածի մասին և առաջին անգամ լսել է Գարեգինի մորից, ապա ինչպե՞ս նրա աշխատանքի դուրս չգալու դեռ երկրորդ օրը նա այդ մասին տեղեկացրել է բուսաբանական ինստիտուտին...

— Մխալ եմ հասկացել...— մրմնջաց Գարեգինը, բայց և իսկույն վերհիշեց բոլոր խոսքերը՝ և՛ իր մոր, և՛ ինստիտուտի դիրեկտորի, և Վերգինեի: Մխալ չկար:

Ուրեմն ի՞նչ...

Հանկարծ նա ինքն իրեն նկատեց հագնվելու վրա՝ շտապ, շփոթված, դողդողալով: Պետք է գնալ իսկույն, հարցնել Վերգինեին, եթե հարկ լինի՝ բռնությամբ դուրս կորզել նրանից ճշմարտությունը...

Նա նայեց ժամացույցին: Ժամը մեկն անց էր: Բայց այդ ոչինչ, նա կարթնացնի Վերգինեին...

Այն, ինչ որ նոր և խորթ էր թվացել հին բարեկամուհու մոտ, այժմ Գարեգինին սկսեց թվալ նաև կասկածելի:

Գարեգինը դուրս եկավ մյուս սենյակ: Արթուրն էր մայրը, թե՛ նոր արթնացավ, բայց ձայն տվեց մահճակալի միջից.

— Ո՛ւր, բալա...

— Ոչինչ, ներքև, ես հիմա...— փորձեց խաբել տղան, բայց մայրը շուռ տվեց կոճակը, լույսը վառեց:

— Ո՛ւր,— ճչաց նա՝ տեսնելով տղային այդ ուշ ժամին լրիվ հագնված և հուզմունքից դողալով:

— Ոչինչ, ոչինչ...

— Սպասի՛ր...

Մայրը դուրս ցատկեց անկողնից, վազեց դեպի տղան:

— Ո՛ւր ես գնում...

Գարեգինը շոյեց մոր գլուխը:

— Գիտեմ,— ժպտաց նա,— կարծում ես, թե ես էլ եմ ուզում ինքնասպանություն գործել: Մի՞թե դա չէի կարող անել սենյակում: Գործ ունեմ, մայրիկ, գործով եմ գնում:

— Առավոտյան գնա,— ինդրեց մայրը, սակայն արդեն հանգստացած:

— Ոչ, մայրիկ, կարևոր է...

Եվ Գարեգինն շտապ ելավ դուրս: Դեպի այգու դուռը գնալիս նա առաջին հարկի մի լուսամուտի գոգից վերցրեց իր սովորական տեղը դրված այգու մեծ դանակը և կոխեց գրպանը: Թույլ զնգաց շան շղթան, ապա լսվեց գամփռի հորանջը: Գիշերային պահակը հեռու էր անշուշտ, այգու մյուս ծայրում և ոչինչ չլսեց:

Գարեգինը դուրս եկավ այգուց: Նրա ետևում դուռը ծածկվեց, և պարզունակ փականքը փակվեց ինքնիրեն: Մի պահ նա վախ զգաց և սեղմեց դանակի կոթը, բայց դա մենակությունից կամ մթոնությունից չէր, այլ գաղտնիքից, որ նա հայտնագործել էր: Նրա ոտքերի տակ լսելի խշշաց սալաքարերով ծածկված առվակը և ետ մնաց: Սաղարթների ծածկը գլխավերևում վերջացավ, գետինը միանգամից լուսավորվեց լուսնով:

Երբ Գարեգինը դուրս եկավ ասֆալտած լայն ճանապարհի վրա, այն լուռ էր և ամայի: Սակայն մի պահ անց, Երևանի կողմից երևացին երկու բեռնատար ավտոներ, իսկ Էջմիածնի կողմից երևաց մի մարդատար: Գարեգինը փորձեց կանգնեցնել այն, բայց մեքենան սլացավ գնդակի պես:

Նորից, մի պահ անց, հայտնվեցին ուրիշ բեռնատարներ և մարդատարներ: Վերջապես Գարեգինին հաջողվեց կանգնեցնել մի բեռնատար և նստել շոֆերի կողքին:

Հագիվ աչք թարթած, ավտոն արդեն սպառեց պարիսպների միջև ընկած ճանապարհը և հայտնվեց Երևանի ընդարձակ ու ելևէջավոր պանորամայի դիմաց: Առջևում, Հրազդանի վրա, կախված էր բետոնե և քարե վիթխարի նորակառույց կամուրջը: Դրանից այն կողմ արդեն Երևանն էր՝ Սիրանուշի ողբերգական գաղտնիքով...

Երբ Գարեգինը, կտրելով քաղաքի քնած փողոցները, շնչասպառ հասավ Վերգինեի տանը, այնտեղ, սենյակում, լույս կար և լսվում էին աղմուկի ու ծիծաղի խառը ձայներ:

Դուռը բաց անելիս նա տեսավ ուռելիքներով ու խմիչքով ծածկված սեղանը, իսկ սեղանի շուրջը՝ տղամարդկանց և կանանց:

Տեսնելով Գարեգինին, Վերգինեն ժպտաց հարբած աչքերով և բացականչեց.

— Գարիկ, անպիտան, դու Է՞լ ինձ մոտ... Գոնե սկզբից հայտնեիր: Հիմա ի՞նչ անենք: Նայիր՝ երեք և երեք...

— Ես քեզ հետ ուրիշ գործ ունեմ,— ասաց Գարեգինը մռայլ:

— Ես էլ հենց այդ ուրիշ գործի մասին եմ ասում,— քրքջաց Վերգինեն և մի կողմ քաշվեց դռնից,— մտիր, մի բան կմտածենք:

— Ոչ, ինքդ դուրս եկ մի թոպեով:

Գարեգինը բռնեց նրա թևից, դուրս քաշեց նրան: Ներսում մարդիկ, առանց ուշադրություն դարձնելու, շարունակում էին իրենց գործը:

— Լսիր, Վերգինե...— Այնքան տարօրինակ հնչեց Գարեգինի ականջին ծանոթ անունը՝ այդ անծանոթ հարբածին ուղղված:— Լսիր, Վերգինե, դու բոլորովի՞ն ես քեզ կորցրել, թե՛ կարող ես պատասխանել ինձ...

Կինը փորձեց կենտրոնանալ, այդ նրան, ըստ երևույթին, հաջողվեց:

— Ասա...

— Դու ե՞րբ ես իմացել Սիրանուշի մահվան մասին...

— Ո՞ւմ... Հա, Սիրանուշի՞... Մի՞թե չեմ ասել քեզ...

— Ինձ էլ ես ասել, բուսաբանական ինստիտուտի դիրեկտորին էլ... Հիմա ո՞ր մեկն է ճիշտը...

Կինը միանգամից սթափվեց: Բայց մի վայրկյան անց նա նորից խոսեց հարբած: Այս անգամ սակայն, նա ակնհայտորեն ձևացնում էր:

— Չեմ հասկանում... Ուրեմն դիրեկտորը մեռե՞լ է...

— Վերգինե,— ասաց Գարեգինը հանգիստ,— նայիր աչքերիս: Եթե չպատասխանես ինձ՝ վայ քեզ: Ես կատակ չեմ անում... Ի՞նչ է պատահել Սիրանուշին...

Կինը ցնցվեց: Նա այժմ ակնհայտորեն ճգնում էր ազատագրվել հարբածության մնացորդներից, գիտակցել, կշռել ասելիքը:

— Գարիկ...

— Ոչ թե Գարիկ, այլ Սիրանուշ.— դու նրա մասին խոսիր...

— Ես գիտեմ, թե ինչ ես կասկածում, Գարիկ, բայց ես մեղավոր չեմ: Ճիշտ է, նա երբեմն գիշերում էր ինձ մոտ, դա քեզ հայտնի է...

— Հետո՞...

— Երբեմն պատահում էր, որ մեր տղաներն ու աղջիկները,— նա ձեռքը պարզեց դեպի ներս,— հավաքված էին լինում ինձ մոտ: Այդպիսի դեպքերում Սիրանուշը դնում էր շիրման և անմիջապես պառկում քնելու՝ առանց մասնակցելու մեր սեղանին, թեև այնքան խնդրում էին...

— Շարունակիր...

— Մեկը կար,— նա հիմա չկա, փախել է,— որը շատ էր հետաքրքրվում Սիրանուշով...

Գարեգինը ցնցվեց:

— Բայց նա իրեն շատ կորեկտ էր պահում,— շտապեց պարզաբանել Վերգինեն:— Իհարկե, չէր համարձակվում Սիրանուշին ոչինչ ասել և միայն ինձ մոտ էր արտահայտում իր զգացմունքները:

— Զեզ մոտ: Չետո՞...

— Մի երեկո նա եկավ նորից: Տանը միայն ես և Սիրանուշն էինք: Քաղաքավարությամբ ներողություն խնդրեց և ասաց, որ մի կես ժամից գնալու է... Մենք միասին թեյեցինք... Այլևս ոչինչ չեմ հիշում... Ըստ երևույթին նա մեր թեյի հետ ինչ-որ բան էր խառնել և մենք քնել էինք... Առավոտյան Սիրանուշն սկսեց պատմել ինչ-որ բան, որ հազիվ երագի նման էր հիշում, իսկ ես ոչինչ, ոչինչ չէի հիշում, որովհետև խոր քնած եմ եղել...

— Չետո՞...

— Մի ամիս անց Սիրանուշն զգաց իր վիճակը... Եվ հանկարծ հասկացավ, որ այն գիշերվա երագը երագ չի եղել... Սկսվեցին տանջանքները... Քանի անգամ ես ինքս եմ նրան ետ կանգնեցրել ինքնասպանության մտքից, իսկ դու ինձ ես մեղադրում... «Ես և Գարիկն այլևս երջանիկ չենք կարող լինել երբեք»,— ասում էր նա: Իսկ երեխան աճում էր... Բայց նա չէր ուզում աբորտ անել: Այնպես էլ չհասկացա՝ մայրական զգացմունք էր ծագել մեջը, թե՞ վախենում էր մեռնելուց...

Նայելով Գարեգինի դեմքին, նա սարսափեց նրա հայացքից և շտապեց ընդհատել իր խոսքը:

— Ասա՛,— բացականչեց Գարեգինը՝ ուժեղ սեղմելով նրա ուսը,— ասա՛...

— Սպասիր...

— Ասա՛...

— Թող, ցավեցնում ես:

— Ասա՛...

— Թող... Նա չի մեռել... Թող...

Գարեգինը կամացուկ ետ քաշեց ձեռքը, և կարծես աշխատելով հասկանալ, շփեց իր ճակատը:

— Չի մեռել, կենդանի է, հասկանո՞ւմ ես,— բղավեց կինը տղայի ականջին:

Գարեգինը հենվեց պատին և աչքերը փակեց:

3

— Սիրանուշը չի մեռել, կենդանի է,— մի անգամ ևս կրկնեց Վերգինեն:— Խեղճն այնքան լաց էր լինում, այնքան էր ուզում տեսնել քեզ... Բայց նա գիտեր քեզ և գիտեր, որ երջանկությունն այլևս անհնար է, դրա համար էլ խնդրեց, որ ասեմ, իբր նա մեռել է... Եվ գնաց Մեղրի՝ այնտեղ ապրելու և աշխատելու համար...

Գարեգինն աչքերը բաց արեց և նայեց կնոջը: Մթության մեջ անգամ նրա աչքերը սարսափելի էին: Նրանք շատ փոքր էին՝ իրենց մեջ տեղավորելու համար ուրախությունը: Նրանք միայն տազնապած էին:

— Ուրեմն Սիրանուշը կենդանի է,— շշջաց նա՝ չհավատալով իր ձայնին, իր շրթունքների շարժումներին, իր լսողությանը:

— Քանի՞ անգամ կրկնեմ... Իսկ գնալիս խնդրեց.— «Երբ Գարեգինը գա՞ գրիր ինձ նրա մասին մանրամասն, մանրամասն, թող դա լինի քո փոքրիկ լավությունն այն մեծ վատության հանդեպ, որ արել ես ինձ...»: Նա կարծում էր, թե իմ օգնությամբ էր եղել այն գործը...

— Այդ մասին հետո...— ասաց Գարեգինը և հեռացավ:

Նա գնում էր օրորվելով, հարբածի նման, և շուտով նրա կերպարանքը կորավ փողոցի հեռվում:

Արևոտ առավոտը, որ բացվեց Երևանի վրա, գիշերվա խավարի հետ ցրեց նաև Գարեգինի ուղեղում հավաքված մշուշը: Մի քանի ժամվա երկար մաքառումից հետո նա վերջապես կարողացավ սեղմել, խտացնել, փոքրացնել ահռելի մեծ խնդությունը և տեղավորել իր գիտակցության մեջ,— Սիրանուշը կենդանի է...

Երբ փչեցին գործարանների շչակները, գնացքն արդեն տանում էր Գարեգինին: Գնացքը սլանում էր այգիների, բանջարանոցների, ցանքերի միջով: Շուրջն ամենուր ջրանցքներ էին, շենքեր, Էլեկտրահաղորդման պողպատե աշտարակներ... Իսկ դիմացը երջանկությունն էր...